ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

2

Սեպտեմբեր, 2006

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ Լ Ո Բ Ո Ւ Ս

Վերլուծական տեղեկագիր

Г Л О Б У С

Аналитический бюллетень

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատերազմը Մերձավոր և Միջին Արևելքում 5

Իրանը և ՄՄԱ հակամարտությունը 11

Ливано-израильский конфликт: военный аспект ……..... 14

Պատերազմի տեղեկատվական ենթատեքստը 18

Израильско-курдские отношения 22

«Հիզբալլահ» 26

«Համաս» 29

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

ԱՄՆ ռազմավարությունը և պատերազմը Մերձավոր ու Միջին Արևելքում.- ՄՄԱ-ում տիրող ներկայիս իրավիճակը պայմանավորված է 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ծայր առած «հակաահաբեկչական պատերազմով» և որպես դրա հետևանք՝ Աֆղանստանի և Իրաքի հանդեպ ծավալված գործողություններով: Համաձայն ԱՄՆ արդի քաղաքականությունն իրականացնող քաղաքական ընտրանու իշխող տեսլականի՝ ամերիկյան ներխուժումը պետք է վերափոխեր ՄՄԱ-ի և Կենտրոնական Ասիայի գաղափարախոսական, ռազմաքաղաքական և տնտեսական բովանդակությունը, հանգեցներ նոր էթնիկական-պետական միավորների առաջացմանը: Նման ծրագրերը, մասնավորապես՝ ՄՄԱ-ում, հետապնդում էին հետևյալ նպատակները.

- Նվաճել ԱՄՆ-ի համար շահեկան դիրքեր Եվրասիայում և այդպիսով աշխարհաքաղաքական առավելության հասնել Չինաստանի ու Ռուսաստանի հանդեպ (Իրանի վարչակարգի փոփոխումը ենթադրվում էր լուծել ընթացքում՝ գործողությունների առաջին փուլում, ռազմական ներխուժման համար որպես հենակետ օգտագործելով Իրաքը):
- ՄՄԱ-ի Էներգետիկ ռեսուրսների վրա ուժային վերահսկողություն սահմանելով՝ ապահովել սեփական էներգետիկ անվտանգությունը և աշխարհատնտեսական լծակներ ձեռք բերել էներգառեսուրսներով ոչ հարուստ Չինաստանի, Հնդկաստանի, ինչպես նաև Եվրոպայի և Ճապոնիայի հանդեպ:
- Ապահովել Իսրայելի անվտանգությունը՝ վերահսկելով տարածաշրջանի ռազմաքաղաքական արժեք ներկայացնող երկրները՝ Իրաք, Իրան, Սիրիա, Լիբիա, իսկ հետագայում նաև Սաուդյան Արաբիա, Եգիպտոս. այս թեզն առաջնային էր նեոկոնսերվատորների համար:
- Փոխելով ՄՄԱ երկրների վարչակարգերը՝ տարածաշրջանում ներդնել ամերիկյան պատկերացումներին համապատասխան ժողովրդավարական համակարգ. դա պետք է ապահովեր ձեռքբերումների հարատևությունը:

Պետք է ընդունել, որ ԱՄՆ–ը կարողացավ լուծել ՄՄԱ-ում իր առջև դրված խնդիրների մի մասը. Իրաքը կորցրել է ռազմաքաղաքական նշանակությունը և փաստացի բաժանվել մասերի[1], Լիբիայի ղեկավարությունը, խուսափելով հնարավոր զարգացումներից, գերադասել է փոխել կողմնորոշումները և փաստացի դուրս է եկել ամերիկյան «սև ցուցակի» երկրների շարքից, Սիրիան ստիպված էր լքել դիրքերը Լիբանանում: Միևնույն ժամանակ, կարելի է արձանագրել, որ ԱՄՆ գործող ռազմավարական ծրագրերն ինչ-որ չափով թերի են, և դրանցում ճշգրիտ չէին հաշվարկվել, մասնավորապես, հետևյալ գործոնները.

- Գլոբալ հարթությունում ԱՄՆ գործողություններն ընկալվեցին որպես բացարձակ միաբևեռ աշխարհակարգի հաստատման ձգտում: Դա առաջացրեց մնացյալ աշխարհի դիմադրությունը և արտահայտվեց Չինաստանի, Ռուսաստանի, Եվրոպայի ու Հարավային Ամերիկայի որոշ երկրների՝ ԱՄՆ մենատիրական հավակնությունների դեմ ուղղված քայլերով. նախնական փուլում այդ երկրների գործողություններն անկանոն էին, սակայն հետզհետե ընդունեցին ավելի համակարգված բնույթ:

---

1 Իրաքում ստեղծված քաոտիկ իրավիճակը կարելի երկակի գնահատել: Անվիճելի իրողություն է, որ այն չի վերահսկվում ամերիկյան զինուժի կողմից, ինչը տեղի է տալիս ԱՄՆ ռազմաքաղաքական անհաջողության վերաբերյալ մեկնաբանությունների: Սակայն եթե իրադրությունը դիտարկենք Իրաքի մասնատման և ստեղծված անկայունությունը տարածաշրջանի այլ երկրներ տեղափոխելու տեսանկյունից (ինչը կարող է նախապայմաններ ստեղծել ամերիկյան վերահսկողության ծավալման համար), ապա չի կարելի բացառել, թե նման եղանակով ամերիկացիները ավելի բարձր մակարդակի ռազմավարական հարթությունում՝ ելնելով այսպես կոչված կառավարելի քաոսի հայեցակարգի տրամաբանությունից, փորձում են լուծել իրենց առջև դրված խնդիրները: Միևնույն ժամանակ այդ ռազմավարությունը իր մեջ պարունակում է հայտնի վտանգներ ԱՄՆ-ի (և Իսրայելի) համար: Անկայունության «սփռումը» կարող է դուրս գալ վերահսկողությունից, իսկ ծայրահեղականությունը՝ որը շատ առումներով խոցելի կատեգորիա է, կարող է վերափոխվել ազգային գաղափարախոսական համակարգի, որի դեմ պայքարելն անհամեմատ դժվար է: Նման մի օրինաչափություն նկատելի Իրանի պարագայում. այդ երկիրը իր պատմության վերջին հեղափոխական-ծայրահեղական փուլից հետո ընտրեց ազգային զարգացման ուղին, ինչը և պայմանավորում է այդ երկրի «անխոցելիության» աստիճանի բարձրացումը:

- Իրանի էվոլյուցիան ռազմաքաղաքական, տնտեսական և տեղեկատվական ոլորտներում փոխեց ուժերի հարաբերակցությունը և, հետևաբար, իրավիճակը ՄՄԱ տարածաշրջանում: Այդ երկիրն այսօր էական դերակատարում է ձեռք բերել ՄՄԱ երկրների (հատկապես Իրաքի, Սիրիայի և Լիբանանի) քաղաքական անցուդարձում: Այսօր Իրանը՝ որպես տարածաշրջանի առաջատար, խորհրդանշում է իսլամական աշխարհի դիմադրությունը ԱՄՆ-ի և Իսրայելի դեմ: Հատկանշական է, որ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումները հանգեցրին ոչ թե այդ երկրի մեկուսացմանը (ինչպես դա ենթադրվում էր), այլ որոշակիորեն նպաստեցին Ռուսաստանի, Չինաստանի և, մասամբ, Ֆրանսիայի ու Գերմանիայի համախմբմանը:

Վերոհիշյալ հանգամանքների արդյունքում՝ ՄՄԱ-ում ձևավորվել է մի իրադրություն, երբ ԱՄՆ-ի և Իսրայելի համատեղ ծրագրերն անավարտ են մնացել, իսկ նրանց դիրքերը գլոբալ և տարածաշրջանային հարթություններում վատթարացման միտում ունեն: Նման իրավիճակում որոշ վերլուծաբաններ կանխատեսում էին տարածաշրջանում պատերազմական գործողություններ՝ նկատի ունենալով ԱՄՆ-Իրան առճակատումը: Սակայն ներկա փուլում Միացյալ Նահանգները, համարժեք գնահատելով ստեղծված իրավիճակը, չդիմեց Իրանի դեմ ուղղակի ռազմական գործողությունների, այլ նպատակահարմար գտավ Իսրայելի միջոցով ձեռնարկել *«հաղթական փոքր պատերազմ»:* Դա թույլ կտար ԱՄՆ-ին կասեցնել իր համար բացասական տարածաշրջանային միտումները, բարելավել «գերտերության» երերացող իմիջը միջազգային հանրությունում, ինչպես նաև բարձրացնել հանրապետական վարչակազմի վարկը ներքին քաղաքական դաշտում:

Պատերազմը և ԱՄՆ-ը.- Այն մասին, որ պատերազմական գործողությունները հրահրել էր ԱՄՆ-ը, վկայում են մի շարք աղբյուրներ: Համաձայն ամերիկյան հեղինակավոր լրագրող Սեյմուր Հերշի՝ հարձակումը Լիբանանի վրա պլանավորվել էր մինչև հուլիսի 12-ը, երբ «Հիզբալլահը» գերեվարեց իսրայելական երկու զինվորների: Լիբանանի վրա հարձակումը և «Հիզբալլահի» հենակետերի ու ռազմական ենթակառուցվածքի օդահրթիռային հարվածներով ոչնչացումը, ըստ Ս.Հերշի, Իրանի դեմ մշակված ընդհանուր պլանի մի մասն էր: Ենթադրվում էր նաև, որ պատերազմական գործողությունները պետք է ավարտվեին ոչ ավելի, քան 7 օրում, այսինքն՝ ամերիկյան պատկերացումներով՝ դա իրոք պետք է լիներ «հաղթական փոքր պատերազմ»:

Միևնույն ժամանակ, համաձայն «Հիզբալլահի» ղեկավարներից մեկի՝ Նաիմ Քասսեմի ունեցած տեղեկատվության՝ Իսրայելը պատրաստվում էր հարվածել սեպտեմբերին, սակայն ԱՄՆ վարչակազմի ճնշման ներքո ՅԱԽԱԼ-ը ակտիվ գործողություններն սկսեց 2 ամիս շուտ: Այդ տեղեկատվությունը վկայում է այն մասին, որ այնպես էր արվել, որ պատերազմի սկիզբը, թերևս, համընկնի հուլիսի 15-17-ը Սանկտ Պետերբուրգում կայանալիք «ութնյակի» գագաթաժողովին: Նման վարկածի օգտին է խոսում նաև այն, որ գագաթաժողովների ընթացքում ահաբեկչական սպառնալիքի շեշտումը և այդպիսով ԱՄՆ ներկայիս վարչակազմի հակաահաբեկչական ռազմավարության հիմնավորումն ու լեգիտիմացումը դարձել են յուրօրինակ ավանդույթ. հիշենք, որ նախորդ տարի Էդինբուրգում կայացած գագաթաժողովի ժամանակ կատարվեց ահաբեկչությունների շարք Լոնդոնում, ինչը նույնպես կարելի է մեկնաբանել դիվանագիտական-տեղեկատվական գործողությունների համատեքստում: Կարելի է կարծել նաև, որ ՄՄԱ-ում ծավալված հակամարտության արդյունքում ամերիկյան կողմը փորձ է արել «փաթաթել» իր սցենարը սանկտպետերբուրգյան հանդիպման «փակ մասում» ընթացող բանակցություններին: Նկատենք, որ արդեն պատերազմի ընթացքում ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ձեռնարկեցին երկրորդ լայնածավալ «տեղեկատվական» գործողությունը՝ բացահայտելով պակիստանցի «օդային ահաբեկիչների ցանցը»:

Ելնելով վերոհիշյալից՝ ՄՄԱ զարգացումներին ամերիկյան մոտեցումները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. Գլոբալ հարթությունում հաղթական պատերազմը ԱՄՆ-ին անհրաժեշտ էր, որպեսզի վերականգնի երերացող քաղաքական դիրքերը համաշխարհային հանրությունում և,

մասնավորապես, «մեծ ութնյակի» ձևաչափում: Տեղեկատվական հարթությունում այդ պատերազմը նախագծվել էր որպես «հաղթական և կարճատև»:

2. ՄՄԱ տարածաշրջանում այդ «հաղթական և կարճատև» պատերազմը բխում էր ԱՄՆ-Իրան աշխարհաքաղաքական և աշխարհագաղափարախոսական հակամարտության տրամաբանությունից: Իսրայել-«Հիզբալլահ» հակամարտության մարտական փորձն անհրաժեշտ էր ԱՄՆ զինված ուժերի ղեկավարությանը՝ որպես փորձ Իրանի դեմ հնարավոր լայնածավալ ռազմական գործողությունների համատեքստում:
3. «Հաղթական պատերազմը» հրատապ նշանակություն ուներ Վաշինգտոնի հանրապետական վարչակազմի համար՝ հաշվի առնելով նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի ընտրությունները և այդ համատեքստում նախագահ Բուշի ցածր վարկանիշը:

Պատերազմի հետևանքները ԱՄՆ-ի համար.- Կարելի է արձանագրել, որ պատերազմի հետ կապված ամերիկյան ծրագրերն իրականացվեցին միայն մասամբ. ռազմական գործողությունները տևեցին ամսից ավելի, և դրանք դժվար է որակել որպես «հաղթական»: Արդյունքում՝ ԱՄՆ դիրքերը տուժեցին և՛ տարածաշրջանային, և՛ գլոբալ հարթություններում: Մասնավորապես՝ Իրանի միջուկային ծրագրի խնդրում Իրանը կոշտացրեց դիրքորոշումը, իսկ եվրոպական երկրների մոտեցումները մեղմվեցին և դարձան ավելի ճկուն, լրացուցիչ հիմնավորումներ ստացան Ռուսաստանը և Չինաստանը: Հնարավոր է, որ հետևելով Իրանի օրինակին՝ սեփական միջուկային ծրագրերի վերաբերյալ սկսեցին ավելի ակտիվ արտահայտվել Հարավաֆրիկյան Հանրապետությունը և Արգենտինան:

Զգալիորեն տուժեց նաև հանրապետական վարչակազմի իմիջը. համաձայն *American reasearch Group*-ի՝ սեպտեմբերին Բուշի վարկանիշը հասել է նվազագույնին՝ ԱՄՆ քաղաքացիների ընդամենը 35%-ն է համարում, որ Բուշը կարողանում է կատարել իր պարտականությունները: Վարչակազմի ընդդիմադիրները ստացան լրացուցիչ հիմնավորումներ՝ քննադատելու համար ընթացիկ քաղաքականությունը, ինչը կարող է նպաստել ապագա ընտրություններում հանրապետականների անհաջողությանը:

Որպես դրական արդյունք՝ ԱՄՆ-ի համար պետք է գրանցել այն մարտական փորձը, որը ձեռք բերվեց «*Հիզբալլահի»* հետ հակամարտությունում. ներկայումս ամերիկյան ռազմական փորձագետները վերլուծում են *ՅԱԽԱԼ*-ի ռազմական գործողությունների արդյունավետությունը, ինչն ապագայում թույլ կտա խուսափել կատարված սխալներից:

Իսրայել.- Այս երկրի մարտավարական խնդիրն էր Պաղեստինում իշխանության եկած *Համասի* կազմալուծումը և «*Հիզբալլահի»* ռազմական ենթակառուցվածքի, հատկապես՝ հրթիռային կրակակետերի ոչնչացումը: Տեղեկատվական-հոգեբանական հարթությունում ենթադրվում էր կարճատև «հաղթական պատերազմ», որը պետք է ամրապնդեր Իսրայելի տարածաշրջանային «գերտերության» իմիջը և բարելավեր վարչապետ Օլմերտի դիրքերը ներքին քաղաքական դաշտում: Որպես առավել հայեցակարգային խնդիր՝ Իսրայելի իշխանությունները դիտարկում էին Լիբանանի դեմ ձեռնարկած գործողություններով շիա և սուննի համայնքների առավելագույն պառակտումը. էթնիկական-դավանական հակասությունների օգտագործման խնդրում Իսրայելը և ԱՄՆ-ը (վերջինս դա լայնորեն կիրառում է Իրաքում) միանման մոտեցումներ ունեն:

Համասի դեմ գործողությունները կրում էին պատժիչ բնույթ, և իսրայելցիներին հաջողվեց հասնել իրենց նպատակներին: Սակայն «*Հիզբալլահի»* պարագայում նրանք լուրջ դիմադրության հանդիպեցին և միայն մասամբ լուծեցին խնդիրները: Բավական է նշել, որ Իսրայելը հրթիռակոծվում էր մինչև պատերազմի վերջին օրը, իսկ մոտ 1 միլիոն քաղաքացիներ ստիպված լքել էին իրենց բնակության վայրերը կամ օրերով պատսպարվում էին ռմբապաստարաններում: Իսրայելի տնտեսությունն ընդհանուր առմամբ կրեց $2.6մլրդ-ի վնաս: Չլուծվեց նաև պատերազմի ռազմավարական խնդիրը. Արդյունքում՝ սուննի-շիա հարաբերությունները ոչ թե սրվեցին, այլ լիբանանցիները համախմբվեցին «*Հիզբալլահի»* շուրջ: Բնորոշ է, որ ընդհանուր առմամբ նկատելիորեն նվազեցին նաև արաբական աշխարհում իշխող հակասությունները: Պատերազմի հետևանքով զգալիորեն խաթարվեցին Իսրայելի դիրքերը միջ-

ազգային հանրությունում. բավական է նշել, որ Գերմանիան, Իտալիան և Մեծ Բրիտանիան արգելել են *EI AI* ավիաընկերությանը, որը ԱՄՆ-ից *ՅԱԽԱԼ-ի* համար բեռներ է տեղափոխում, օգտագործել իրենց օդանավակայանները լցակայանման համար:

Ռազմական հարաբերական անհաջողությունների արդյունքում՝ Իսրայելի հանրությունում ծայր առավ ներքաղաքական ճգնաժամ, որի հետևանքով մեծապես տուժել է Իսրայել պետության բուն գաղափարը. կարելի է փաստել, որ տեղեկատվական-հոգեբանական ոլորտում Իսրայելի կրած պարտության չափը և աստիճանը գերազանցում են ռազմական անհաջողություններինը:

Միևնույն ժամանակ, պատերազմի քաղաքական-դիվանագիտական արդյունքներն իսրայելցիների համար դժվար է անբարենպաստ համարել. խաղաղապահ ուժերի տեղակայումը սահմանափակում է «Հիզբալլահի» հնարավորությունը և համապատասխանաբար բարձրացնում Իսրայելի անվտանգության աստիճանը:

Իրան.- Ինչպես վերը նշեցինք, ԱՄՆ-ի և Իսրայելի համար պատերազմի հիմնական թիրախը Իրանն էր՝ իր հարաճող հավակնություններով: Հատկանշական է, որ ընդհանուր լրահոսից ձևավորվում է տպավորություն, թե պատերազմական գործողությունների ծավալումը նպաստավոր էր նաև Իրանի համար: Հաշվի առնելով միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումները և ամերիկյան հայտնի հարձակողական պլանները՝ հնարավոր զարգացումների էպիկենտրոնի տեղափոխումը Իրանից Լիբանան և Պաղեստին ձեռնտու պետք է լիներ Իրանին: Այսինքն՝ այդ տերությունը, ձևավորելով Հարավային Լիբանանում «*Հիզբալլահի*» լավ նախապատրաստված ցանցային, ճյուղավորված կառույցը և կուտակելով զգալի ռազմական ռեսուրսներ, պետք է ձգտեր «տեղափոխել» հնարավոր իրադարձություններն իր սահմաններից հեռու և ապակայունացնել իրավիճակն այլ տարածքում: Այս համատեքստում «*Հիզբալլահի*» առաջնորդ Հասան Նասրալլայի խոսքերը, թե Իսրայելը, սկսելով ռազմական գործողությունները, անհամարժեք արձագանքեց իր զինծառայողների գերեվարմանը և այդպիսով պատերազմն անակնկալ էր իրենց համար, ինչպես նաև իսրայելցի զինվորների գերեվարմանն անտեղյակ լինելու մասին իրանական կողմի հավաստիացումներին, այնքան էլ համոզիչ չեն հնչում. Իրանը նվազագույնը դեմ չէր և պատրաստ էր, որպեսզի պատերազմական գործողություններ սկսվեն (գուցե ոչ այն ծավալով, ինչպես եղավ): Համենայնդեպս, ռազմական հաջողությունը ռազմավարական-տեղեկատվական հարթությունում նույնքան անհրաժեշտ էր Իրանին, որքան ԱՄՆ-ին և Իսրայելին:

Պետք է ամրագրել, որ համատեղելով «*Հիզբալլահի*» ռազմաքաղաքական ներուժը, դիվանագիտական խուսանավումները և սպառնալիքները (նոր զինատեսակների ցուցադրություններով ընթացող զինավարժություններ, ի պատասխան ՄԱԿ-ի հնարավոր պատժամիջոցների՝ նավթի արտահանումը դադարեցնելու և այդպիսով բարելի գինը մինչև $100-150-ի հասցնելու խոստումներ)՝ Իրանը հասավ տպավորիչ արդյունքների: Կարելի է պնդել, որ միջնաժամկետ հեռանկարում պատերազմի ամենաշահող կողմը այդ երկիրն է: Բավական է նշել, որ արդյունքում Իրանին հաջողվեց ինչ-որ չափով լեգիտիմացնել իր միջուկային ծրագիրը (միջազգային հանրությունը զգալիորեն մեղմացրել է դիրքորոշումն այդ ծրագրի նկատմամբ: Կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ պատերազմի արդյունքներն էապես զսպեցին ԱՄՆ-ի և Իրանի միջև հակասությունները ռազմական միջոցներով լուծելու մտադրությունները: Ամրապնդվեցին Իրանի առաջատար դիրքերը նաև ՄՄԱ-ում և ողջ իսլամական աշխարհում: Բարելավվեցին Ահմադինեժադի դիրքերը ներքին քաղաքական դաշտում, որտեղ նրա դեմ լուրջ ընդդիմություն էր ձևավորվում: Այդ գործչի վարկանիշը բարձրացավ նաև վերլուծաբանական հանրությունում. Օրինակ՝ Մոսկվայի Մերձավոր Արևելքի ինստիտուտի տնօրեն Եվգենի Սատանովսկին Ահմադինեժադին բնութագրեց որպես «սառնասիրտ և տաղանդավոր գործիչ»:

Պատերազմի հետևանքները Հայաստանի Հանրապետության համար.- Հայտնի է, որ ՀՀ-ն և հայությունը հստակ արտահայտված ազգային շահեր ունեն ՄՄԱ տարածաշրջանում: Լիբանանի և ընդհանրապես ՄՄԱ-ի հայկական համայնքները մշտապես տուժում են շարու-

նակաբար ընթացող ռազմական գործողություններից, և այդ առումով վերջին պատերազմը բացառություն չի կազմում. անկախ նրանից՝ ռմբակոծվել է թե ոչ Բեյրութի հայկական թաղամասը, ակնհայտ է, որ այդ երկրի ենթակառուցվածքների փլուզումը նպաստում է, որպեսզի հայերը լքեն տարածաշրջանը: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ Երուսաղեմում, բացի հայկական համայնքից, տեղակայված է հայության ազգային հարստության զգալի մասը, և այդ առումով մոտեցումները ՄՄԱ զարգացումներին պետք է կրեն հավասարակշռված բնույթ:

Այսօր ՀՀ հանրությունում լսվում են առաջարկներ Լիբանան խաղաղապահներ ուղարկելու վերաբերյալ: Նկատենք, որ դրանք զուրկ չեն հիմնավորումից. բոլոր պարագաներում նման քայլը պակաս արդարացված չէ, քան Իրաք զորամիավորում ուղարկելը: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ նման խնդիրները լուծվում են մեծ տերությունների որոշումների համատեքստում: Այդ առումով անհամեմատ ավելի հրատապ են ՄՄԱ-ում ՀՀ քաղաքական, տեղեկատվական-վերլուծաբանական ներկայության խնդիրները, որոնք բավարար լուծումներ չեն ստացել: Մասնավորապես՝ հակամարտության ընթացքում սեփական լրահոսը գործնականում բացակայում էր, չկար տեղեկատվություն նաև գործուղված փորձագետների վերաբերյալ:

ՄՄԱ զարգացումներն անուղղակիորեն կապված են նաև ԼՂՀ հիմնախնդրի հետ: Այդ համատեքստում պատերազմի արդյունքները, թերևս, պետք է դրական գնահատել: Նման մոտեցումը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով.

- Ինչպես նշել ենք վերը, կարճաժամկետ հեռանկարում Իրանի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողություններ կատարելու հավանականությունը նվազել է, ինչն, իր հերթին, նվազեցնում է Իրանի հետ սահմանամերձ ԼՂՀ ազատագրած տարածքները միջազգային ուժերի վերահսկողության տակ դնելու հրատապությունը:
- Պատերազմի արդյունքում Ռուսաստանի և Իրանի դիրքերի ամրապնդումը նպաստելու է այդ երկրների և ԱՄՆ-ի միջև ԼՂՀ խնդրում ուժերի հարաբերական հավասարակշռության հաստատմանը. նման իրավիճակը մեծացնում է ՀՀ դիվանագիտական խուսանավման հնարավորությունները:

Վերոհիշյալի համատեքստում, թերևս, նպատակահարմար է դիտարկել ՄՄԱ զարգացումների հետևանքները նաև ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի համար:

Ռուսաստան.- Այս տերությունն ունի մերձավորարելյան զարգացումներից դժգոհ չլինելու բոլոր հիմքերը, քանի որ.

1. ԱՄՆ-ի և Իսրայելի հարաբերական անհաջողությունն ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը գլոբալ հարթությունում, հատկապես ԱՄՆ-ի հետ սառըպատերազմյան տրամաբանություն ձեռք բերած հարաբերություններում: Բնորոշ է, որ Ալյասկայում (ԱՄՆ) տեղի ունեցած Սերգեյ Իվանով-Դոնալդ Ռամսֆելդ հանդիպման ընթացքում, թերևս, առաջին անգամ վերջին 15 տարում ամերիկյան կողմը հանդուրժողականություն ցուցաբերեց և հնարավոր համարեց մեղմացնել Ռուսաստանի ռազմարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) ձեռնարկությունների դեմ վերջերս կիրառվող պատժամիջոցները: Հատկանշական է նաև, որ Ռուսաստանը կարծրացրեց դիրքորոշումը և՛ ԱՄՆ-ից զյուղապրանքների ներկրման, և՛ այդ համատեքստում Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամագրվելու պայմանների խնդիրներում:
2. Ռուսաստանը լրացուցիչ հիմնավորումներ ստացավ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումներում, որոնցում այդ տերությունը, ելնելով սեփական ազգային շահերից, հանդես է գալիս որպես կոնսենսուսային լուծումների կողմնակից: Ընդհանուր առմամբ ՄՄԱ տարածաշրջանի վերջին իրադարձություններն ամրապնդեցին Ռուսաստանի հայտնի դիրքորոշումներն Իրաքի խնդրում և Իրանի ու Սիրիայի հետ ռազմատնտեսական հարաբերություններն ավելի սերտացնելու հիմք հանդիսացան:
3. Պատերազմական գործողությունները ռուսական զենքի (հատկապես *ՌՊԳ-29* հակատանկային հրթիռների) համար հանդիսացան լավագույն գովազդ, որի հետևանքով այդ

երկրի ՌԱՀ ներկայացուցիչները կանխատեսում են շահավետ նոր պայմանագրերի կնքում։

Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ պատերազմի դրական արդյունքները կարող են ամրապնդել Արևմուտքի դեմ հակամարտությունում Ռուսաստանի ղեկավարության՝ իսլամական աշխարհի վրա հենվելու դեռևս ԽՍՀՄ-ից եկող միտումը։ Այդ գործոնը ՀՀ-ի համար որոշակի ռիսկեր է ենթադրում, քանի որ, մասնավորապես, աշխուժացնում է իսլամական կողմնորոշում ունեցող և Կրեմլի վրա զգալի ազդեցություն ունեցող Եվգենի Պրիմակովի խմբավորումը։ Այստեղից հետևում է, որ ՀՀ-ն պետք է համապատասխան ջանքեր գործադրի նման միտումները կասեցնելու ուղղությամբ։

Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ԻՐԱՆԸ ԵՎ ՄՄԱ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Հիզբալլահի» պայմանական հաջողությունը Իսրայելի հետ պատերազմում որոշակիորեն ամրապնդեց Իրանի դիրքերն ինչպես տարածաշրջանում, այնպես էլ նրա միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցություններում: Իրանի համար հակամարտության հիմնական հետևանքներից կարող են համարվել.

Քաղաքական հետևանքներ

1. Վերջին տասը տարիներին *«Հիզբալլահը»* հիմնականում դադարեցրել էր ահաբեկչական գործողությունների իրականացման քաղաքականությունը և զբաղված էր, առաջին հերթին, ներքաղաքական գործունեությամբ, ինչպես նաև հիմնականում իրանական աջակցությամբ սեփական ռազմուժը զարգացնելով: Եվ չնայած Իրանն ու *«Հիզբալլահը»* շատ հաճախ հայտարարում էին սեփական պոտենցիալի մասին՝ առաջին հերթին Թեհրանին բավարար չափով հայտնի չէր, թե ինչի է ընդունակ իր լիբանանյան դաշնակիցը: Իսկ սա բավական կարևոր էր Իրանի համար՝ հաշվի առնելով այն, որ իրանա-ամերիկյան/իսրայելյան ռազմական բախման հնարավորություն կա: Վերջին հակամարտությունն Իսրայելի հետ ապացույցն էր այն բանի, որ ծախսված գումարների[1] և ստացված զինատեսակների արդյունավետությունը բավական մեծ է:
2. Իսրայելը չկարողացավ հասնել իր հիմնական նպատակներին՝ ոչնչացնել *«Հիզբալլահի»* ղեկավարությանը և նրա ռազմական կարողությունը, միջազգային խաղաղապահների միջոցով ստեղծել անվտանգ բուֆերային տարածք իր և *«Հիզբալլահի»* միջև: Խաղաղապահների տեղակայումը հակամարտության գոտում երևի թե ձեռնտու է և՛ իսրայելական, և՛ լիբանանյան կողմերին: Խաղաղապահները «տարածվելու» են ողջ սահմանային գոտու երկայնքով, սակայն դժվար թե կարողանան զինաթափել *«Հիզբալլահին»,* որը փորձելու է վերականգնել իր դիրքերն այս շրջանում: Իսկ խաղաղապահների ներկայությունը նոր պատերազմի դեպքում հիմնականում սահմանափակելու է Իսրայելի հնարավորությունները. այսուհետ հնարավոր չի լինի Լիբանանում իրագործել «վառված հողի» ռազմավարությունը, որի արդյունքում պարզապես ոչնչացվում էին բնակավայրերը և տարածքները: Սա, իհարկե, պետք է հաշվի առնվի այն պետությունների կողմից, որոնք պատրաստակամություն են հայտնել Լիբանան ուղարկել իրենց խաղաղապահներին:

Զեռքբերումներ միջուկային ծրագրի հիմնախնդրում

3. Միջուկային ծրագրի շուրջ վերջին բանակցությունները հաջողությամբ չավարտվեցին: Սակայն ամերիկյան և եվրոպական արձագանքը Իրանի դիրքորոշման կարծրացմանն ավելի մեղմ էր, քան սպասվում էր: Սա հիմնականում պայմանավորված է *«Հիզբալլահի»*՝ որպես Իրանի «ասիմետրիկ զինատեսակի» հաջողությամբ: Միևնույն ժամանակ, իրանամետ և ազգությամբ պարսիկ իրաքյան ծայրահեղական այաթոլլա Մ. Աս-Սադրի կողմից Բաղդադում կազմակերպված՝ Լիբանանի պաշտպանությանն ուղղված հանրահավաքին մասնակցեց ավելի քան 400.000 մարդ: Ինչպես նշեց ամերիկյան փորձագետներից մեկը, «բավական էր Սադրի մեկ կոչը, և այս ամբոխը մեկ օրում Բաղդադը կմաքրեր ամերիկացիներից»: Իրանական այս երկրորդ «ասիմետրիկ զինատեսակը»

[1] Իրանի կողմից *«Հիզբալլահի»* ֆինանսավորումը վերջին տասնամյակի ընթացքում կազմել է տարեկան մոտավորապես $100 մլն: Պատերազմից հետու *«Հիզբալլահը»* հայտարարեց, որ ռմբակոծումներից տուժածներին գալիք 4 ամիսների ընթացքում բաժանվելու է ավելի, քան $800 մլն: Սա *«Հիզբալլահի»* միայն «հումանիտար» ծախսերն են: Ակնհայտ է, որ հսկայական գումարներ հատկացվելու են նաև ռազմական պոտենցիալի վերականգնմանը: Միևնույն ժամանակ, կասկածից վեր է, որ վերը նշված հատկացումների մեծ մասը ստացվելու է հենց Թեհրանից: Հաշվի առնելով, որ նման գումարների հատկացումն անհնար է միայն Մ.Ահմադինեժադի որոշմամբ, առանց հոգևոր ղեկավարության համաձայնության, կարելի է ենթադրել, որ *«Հիզբալլահի»* հետագա վերազինումը և նրա հետագա օգտագործումը հնարավոր իրանա-ամերիկյան/իսրայելական հակամարտությունում արդեն իսկ ընդհանուր իրանական արտաքին քաղաքական գծի անքակտելի մասերից են:

նույնպես միջազգային հանրությանը ցույց տվեց, թե ինչ ուժով կարող է «կառչել» Իրանը ԱՄՆ-ից և նրա դաշնակիցներից։

4. Իսրայելա-լիբանանյան պատերազմը, որն սկսվեց Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող ակտիվ բանակցությունների օրերին, երկրորդ պլան մղեց իրանական հիմնահարցը։ Այս ընթացքում Իրանն ավարտեց ծանր ջրի գործարանի կառուցման աշխատանքները, որը գործարկվեց օգոստոսի 20-ին։ Ծանր ջրի ձեռնարկության ստեղծումը, փաստորեն, ավարտում է Իրանի «փակ միջուկային շղթայի» ստեղծումը, որի արդյունքում Իրանի համար միջուկային զենքի ոչ միայն ուրանային, այլ նաև պլուտոնային ճանապարհով ընթանալու հնարավորություն է ստեղծվում։
5. Օգոստոսի վերջին Իրանը հրաժարվեց ընդունել միջազգային հանրության առաջարկն ուրանի հարստացման կասեցման մասին։ Միևնույն ժամանակ, ՄԱԿ ԱԽ անդամները և Գերմանիան որոշեցին հետաձգել Իրանի դեմ պատժամիջոցների կիրառման հարցի քննարկումը։ Այս որոշումը պայմանավորված էր ոչ այնքան Ռուսաստանի և Չինաստանի մոտեցումներով, որքան այն իրողությամբ, որն առաջ է եկել մերձավորարևելյան հակամարտությունից հետո։ Պատերազմը և Իրանի դիրքորոշման էլ ավելի կարծրացումը, փաստորեն, փակուղի են մտցրել միջազգային հանրությանը, որի հաղթահարումը լինելու է ԱՄՆ և Արևմուտքի իրանական քաղաքականության հիմնական հիմնախնդիրը գալիք ամիսների ընթացքում։

Իսրայել-Իրան բանակցություններ

Սեփական տեղեկատվության համաձայն՝ վերջին երկու ամիսների ընթացքում Գերմանիայի, Շվեյցարիայի և Ավստրիայի տարածքներում կազմակերպվել են 5 իրանա-իսրայելական միջպետական գաղտնի բանակցություններ։ Դրանց ընթացքում հիմնականում քննարկվել է մեկ հարց. հակամարտության վերացման համար Իրանն «աշխատում» է «Հիզբալլահի» հետ, իսկ Իսրայելը՝ ԱՄՆ իր համայնքի հետ, որը պետք է ամերիկյան ղեկավարությանը «տեղեկացնի», թե Իրանի հետ պատերազմն Իսրայելի համար անընդունելի և վտանգավոր է[1]*։*

Զարգացումներ Իրանի ներքաղաքական կյանքում.

Պատերազմն ամրապնդեց Իրանի ներկայիս նախագահ Մ.Ահմադինեժադի և Իսլամական հեղափոխության պահապանների բարձրագույն ղեկավարության դիրքերն Իրանի ներքաղաքական դաշտում։ Թուլացան նախագահի գահընկեցության այն կողմնակիցների դիրքերը, որոնք պնդում էին, որ ծայրահեղականությունն արտաքին քաղաքականությունում կարող է կորուստներ բերել Իրանին։ Իսրայելա-լիբանանյան պատերազմը և ԱՄՆ հայտարարությունների մեղմացումը մասնակիորեն վկայում են ծայրահեղական գծի արդյունավետության մասին։ Այսպես կոչված «չափավոր» պահպանողականները սկսեցին հանդես գալ Մ.Ահմադինեժադի դեմ նրա հակաիսրայելական հայտարարություններից հետո։ Այս թևը իրանական ղեկավարությունում ներկայացված է հիմնականում մարդկանցով, որոնք, բացի քաղաքականից, վարում են նաև ակտիվ տնտեսական կյանք։ Նրանց մեծ մասն այսպես թե այնպես կապված է նավթի նախարարության հետ, որի դիրքերի թուլացման հաջող քաղաքականություն է վարում Իրանի նախագահը՝ մանավանդ վերջին երկու ամիսների ընթացքում։

[1] Օգոստոսի վերջին Իսրայելում անց են կացվել փակ փորձագիտական-կառավարական լսումներ պատերազմի արդյունքների մասին։ Այս լսումներին մասնակցած փորձագետին մոտ կանգնած աղբյուրներից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ. 1. Իսրայելի ռազմական ուժերն ինչ-որ չափ իրենք են տապալել ռազմական կամպանիան, որի արդյունքն է եղել Օլմերտի կառավարության տապալումը և իսրայելական բանակին մոտ կանգնած Լիքուդի իշխանության գալը։ 2. Այս պարագայում իսրայելական բանակի դաշնակիցներն են եղել նաև ամերիկյան որոշ նեոկոնսերվատորներ՝ Դ.Չեյնիի և Դ.Ռամսֆելդի ղեկավարությամբ։ Ամերիկյան այս թևը, որն իր նպատակների համար ակտիվորեն օգտագործել է ռազմական հետախուզության հնարավորությունները, նպատակ է ունեցել ԱՄՆ-ին ներքաշել կոնֆլիկտի մեջ, որը որոշ ժամանակ անց պետք է ներքաշեր նաև Իրանին։ 3. Ըստ իսրայելական կողմի որոշ ներկայացուցիչների՝ հենց ամերիկյան ռազմական հետախուզությունն է ծրագրել լոնդոնյան ահաբեկչությունը, որը տապալվել է ԱՄՆ ԿՀՎ կողմից, որի ղեկավարությունը սուր կոնֆլիկտի մեջ է գտնվում պաշտպանության նախարար Դ.Ռամսֆելդի հետ և հանդես է գալիս ընդդեմ Իրանի դեմ պատերազմի։

Հնարավոր իրանա-ամերիկյան բանակցություններ

Իսրայելա-լիբանանյան հակամարտությունից հետո ավելացել են իրանական կառավարությանը մոտ կանգնած փորձագետների հայտարարությունները այն մասին, թե արդեն եկել է այն ժամանակը, երբ ԱՄՆ-ը պետք է փորձեր անի Իրանի հետ անմիջական երկխոսություն սկսելու ուղղությամբ: Այս տեսակետներն են արտահայտում հիմնականում Աբաս Մալեքին՝ Իրանի հոգևոր առաջնորդի և նախկին ԱԳՆ ղեկավար Ա.Ա.Վելայաթիի խորհրդականը, ինչպես նաև Քավեհ Աֆրասիաբին, որն ապահովում է իրանական ղեկավարության տեսակետների տարածումն ամերիկյան փորձագետների շրջանում:

Իրանի նախկին նախագահ Մ.Խաթամիի և ԱՄՆ նախկին ղեկավար Ջ.Քարթերի հանդիպումը նույնպես կարող է վկայել ԱՄՆ-Իրան ուղղակի կապերի հաստատման մասին: Հարկ է նշել, որ ԱՄՆ կատարած այցի ժամանակ Խաթամիին ուղեկցում էր 2 տասնյակից ավելի մարդ, որոնց միայն մի մասն է Խաթամիի շրջապատիչ: Բացառված չէ, որ Խաթամիի պատվիրակության մեջ ընդգրկված են եղել Իրանի ներկայիս ղեկավարության ներկայացուցիչները, որոնց հիմնական նպատակն է եղել ԱՄՆ իշխանության ներկայացուցիչների կամ այդ իշխանություններին մոտ կանգնած անձանց հետ բանակցությունները:

Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի առաջարկությունը ԱՄՆ ղեկավարի հետ հեռուստատեսային բանավեճի պատրաստակամության մասին կարող է որոշակի շրջանում վերափոխվել բարձրամակարդակ հանդիպման կազմակերպման երկկողմանի պայմանավորվածության: Դժվար թե այդ հանդիպումն անցնի նախագահների մակարդակով, սակայն ԱԳՆ ղեկավարների հանդիպման հնարավորությունը բավական մեծ է:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է պնդել, որ իսրայելա-լիբանանյան պատերազմը մատնանշեց մի նոր փուլի սկիզբ, որում ավելի ամուր կլինեն Իրանի դիրքերը և կմեծանա իրանա-ամերիկյան անմիջական կապերի հաստատման հնարավորությունը: Այս կապերի հեռանկարները հիմնականում կախված են ներամերիկյան զարգացումներից, ինչպես նաև այն բանից, թե ԱՄՆ փոխնախագահ/պաշտպանության նախարար և ԿՀՎ/Պետդեպարտամենտի մի մասը/հին կոնսերվատորներ ներքին հակամարտությունում ում մերձավորարևելյան նախագիծը ամերիկյան քաղաքականության հիմք կընդունվի:

Սնակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

ЛИВАНО-ИЗРАИЛЬСКИЙ КОНФЛИКТ: ВОЕННЫЙ АСПЕКТ

Попытка Израиля обеспечить безопасность своей территории с использованием исключительно сил авиации и ракетно-артиллерийских сил провалилась: Тель-Авив был вынужден во время второй стадии конфликта ввести войска на территорию Ливана, но даже при этом израильтянам с трудом удалось добиться прекращения ракетных ударов по своей территории.

Силы до конфликта

Армия обороны Израиля, по данным «Военно-промышленного курьера», до конфликта насчитывала порядка 185 тыс. человек. (Во время боевых действий в армию было призвано еще 30 тыс. резервистов.) В то же время по *данным The International Institute For Strategic Studies*, численность армии составляла 125 тыс. человек. В том числе в Сухопутных войсках 150 000 человек: 3 бронетанковых дивизии, 2 дивизии оперативного контроля (противоинтифадные), пехотная (пограничная, дивизия, 9 бригад в т.ч. 5 механизированных пехотных, 1 бронетанковая, 2 артиллерийские, 1 парашютно-десантная). На вооружении СВ более 100 пусковых установок оперативно-тактических ракет и баллистических ракет среднего действия «Иерихон-1» и «Иерихон-2», 3836 танков, 8100 БТР и БМП, 448 реактивных систем залпового огня (РСЗО), 855 самоходных установок, 520 буксируемых артсистем, 1300 орудий зенитной артиллерии.

ВВС и Войска ПВО насчитывали 35 000 человек. В составе ВВС: 22 авиационные эскадрильи, имевшие 438 боевых самолетов (на хранении около 250 самолетов «Кфир), 10 самолетов-разведчиков, 6 самолетов ДРЛО «Фалкон», 37 самолетов-разведков и РЭБ, 17 транспортных самолетов, 20 самолетов связи, 105 учебно-боевых самолетов, 173 боевых вертолета, 8 противолодочных вертолетов, 150 транспортно-десантных вертолетов.

Боевой состав ПВО – это 77 батарей ЗУР «Усовершенствованный Хок», 3 батареи «Пэтриот», 3 батареи ПРО «Эрроу» («Хец») (дислоцируются: Тель-Авив, южнее Хайфы и у Димона), 8 батарей «Стингер», 73 истребителя ПВО F-15 «Игл».

Силы флота: 6500 человек личного состава, 3 корвета, 4 ПЛ, 14 ракетных катеров, 36 сторожевых катеров, 40 вспомогательных судов.

Непосредственно на севере и северо-востоке Израиля дислоцировались 36-я и 319-я бронетанковые дивизии, 40-я, 820-я отдельные мотопехотные бригады из состава Северного округа. Израиль также провел частичную мобилизацию.

Вооружения стран по данным The International Institute For Strategic Studies. «The Military balance-2006»

Страна	Израиль	Иран	Сирия	Ливан
Военные бюджеты	$10,07 млрд. (включая $2,2 млрд. Внешней военной помощи)	$6,2 млрд. (без учета расходов на ВПК)	$1,45 млрд. (без учета внебюджетных расходов)	$ 531 млн.
Общая численность ВС	168.300 (186.500)	545.000 (520.000)	307.600 (289.000)	72.100 (61.400)
Танки	3.657 (6.870)	1.693+	4.600 (3700)	310 (280)
Бронетехника	10,419+	640 (1.400)	1,600+ (5.060)	1,257
Артиллерия	5.432	8.196+ (3.000)	3.150 (3.674)	541 (335)
Самолеты	402 (470)	281 (203)	632 (350)	14 (-)
Вертолеты	308+ (181)	~250 (340)	191	40 (14)
Субмарины	3	3	-	-

В скобках указаны данные израильского Jaffee Center For Strategic Studies, «Middle East Military Balance-2006». По некоторым позициям есть существенные расхождения данных. В тоже время стоит учитывать, что центр представляет одну из конфликтующих сторон.

ВС Ливана в боевых действиях не участвовали, хотя только их Сухопутные войска насчитывают 58 800 солдат, а в полиции и войсках внутренней безопасности служат 13 000 человек.

Численность военного крыла «Хизбалла» оценивается в 6000-6600 бойцов. Армия шейха Хасана Насраллы делится на батальоны по 250 человек в каждом. По данным различных источников, на вооружении у группировки было 76 122-мм РСЗО «Град», 144 107-мм буксируемых установок «Тип-63» (китайского производства), несколько захваченных у ливанской армии 160-мм самоходных минометов (израильского производства), большое количество минометов 60-мм, 82-мм и 120-мм.

Недочеты еще до начала войны

По оценкам американских экспертов в области разведки, которые были опубликованы *Washington Times*, израильская разведка «Моссад» до начала конфликта неадекватно оценила боевые возможности «Хизбалла». По мнению экспертов, разведке не удалось собрать достаточное количество точной информации о местах дислокации и военных складах боевого крыла шиитского движения. Кроме того, не был принят в расчет факт разделения внутри «Хизбалла» на политическое и военное крыло. В связи с этим мишенями израильских ракет и бомб чаще становились благотворительные, образовательные офисы «Хизбалла». Это, с одной стороны, не сказывалось на боевой мощи группировки, с другой – население Ливана вопреки ожиданиям «Моссада» не повернулось против «Хизбалла».

Другим просчетом оказалось заниженная оценка контрразведывательных сил «Хизбалла». Так, можно предположить, что группировка активно прослушивала секретные радиопереговоры израильских войск, так как сообщения о конкретных потерях в подразделениях Армии обороны Израиля (ЦАХАЛ) появлялись на телеканале «Аль-Манар» практически мгновенно и задолго до официальных сообщений со стороны Тель-Авива. А это в свою очередь позволило «Хизбалла» захватить преимущество в информационной войне. «Хизбалла» также удалось вывести из игры всю израильскую агентуру в своих рядах, тем самым серьезно усложнив задачу ЦАХАЛа.

Тактика сторон

Для Израиля конфликт стал своего рода прелюдией, подготовкой к возможной войне с Ираном. В американскую прессу просочились сведения о том, что Вашингтон подталкивал Тель-Авив к развертыванию военных действий, что могло послужить своего рода «тренировкой» к большой войне с Ираном. Для Ирана же конфликт стал своего рода маневрами перед возможным столкновением с Соединенными Штатами и их сателлитами.

Примечательно, что в начале кампании ЦАХАЛ пытался решить вопрос подавления огневых точек «Хизбалла» и уничтожения боевого потенциала группировки исключительно с воздуха, повторяя Балканскую операцию США. Однако в дальнейшем израильская армия была вынуждена пойти на развертывание сухопутной операции.

«Хизбалла» в свою очередь использовала тактику сетевых военных структур, пуская в бой маленькие отряды, которые использовали сложнейшие подземные фортификационные сообщающиеся сооружения. Именно использование подземной инфраструктуры и методов партизанской войны привело к большим потерям со стороны элитных войск ЦАХАЛа. Кроме того, «Хизбалла» воспользовалась мирными объектами для построения огневых точек, что усложняло продвижение израильской армии и увеличивало жертвы среди мирного населения, что использовалось в дальнейшем в информационной войне против Тель-Авива.

Неучтенные ракеты, помощь союзников

Другим важным аспектом конфликта стало неожиданно большое количество подбитых израильских танков «Меркава». По различным данным, количество подбитых израильских танков колеблется от 42 до 164. Несмотря на динамическую защиту, боевикам удавалось с легкостью поджигать танки. Отметим, что в Южном Ливане в 1997г. во время боев между ЦАХАлом и «Хизбалла» арабам удалось подбить в течение месяца всего 3 танка типа «Меркава». Нынешние беспрецедентные потери в Тель-Авиве объясняют наличием у боевиков противоракетных средств российского производства. В частности, речь идет о 105-миллиметровых ручных противотанковых гранатометах многоразового применения РПГ-29 «Вампир» и противотанковых управляемых ракетах «Фагот», противотанковых ракетных комплексах «Корнет», «Метис», а также ПТУР 9К14 «Малютка». Кроме того, на вооружении у арабской группировки имелись иранские системы «Раад» (модернизированный вариант «Малютки»), «Тупан».

Судя по всему, наиболее эффективными против танков «Меркава» стали ракеты типа «Тандем», прилагаемые в боекомплекте с РПГ-29 «Вампир», а также иранские «Раад», снабженные тандемной кумулятивной боевой частью повышенной бронепробиваемости, способной проникать даже через динамическую защиту. Пресс-служба Армии обороны Израиля распространила фотографии захваченных у боевиков «Хизбалла» вооружений, среди которых встречались как раз противотанковые средства с российской маркировкой. Москва отрицает свою причастность к поставкам вооружений шиитской военной группировке. Предполагается, что Сирия поставляла вооружения, купленные ранее в России. По заявлению ушедшего уже в отставку шефа израильской разведки Зееви-Фаркаша, в апреле 2005г., перед уходом сирийских войск из Ливана, Башар Асад передал военное оборудование и оружие палестинским группировкам и «Хизбалла». Кроме того, по территории Сирии осуществлялись новые поставки иранской военной техники, в частности РСЗО, в Ливан. При этом Израиль не стал выдвигать против России обвинения в прямых поставках вооружений.

Израиль, в свою очередь, получил во время конфликта от США 2,3-тонные высокоточные бомбы *GBU-28*, предназначенные для уничтожения бункеров. Отметим, что Великобритания, Германия, Португалия, Испания и Италия препятствовали поставкам боеприпасов из США в Израиль, не разрешая дозаправки военно-транспортных самолетов на своей территории.

Примечательно, что в западной прессе появились признания израильских офицеров о том, что командование сэкономило на более современных средствах защиты для бронетехники, недооценив угрозу. Так по данным *Sunday Times*, только на 4 танках была установлена радарная защита израильского производства под кодовым названием *Flying Jacket* (стоимость около $380 тысяч). Эти танки от обстрелов не пострадали.

Другой неожиданностью для ЦАХАЛа стало применение со стороны «Хизбалла» противокорабельной ракеты. 14 июля арабской группировке удалось подбить ракетой типа «земля-море» ракетный катер «Ханит». В результате атаки корабль был сильно поврежден, а четыре члена экипажа погибли. Предполагается, что была использована иранская ракета С-802. В дальнейшем были поражены еще два корабля. Несмотря на то, что разведка уже три года назад предупреждала о наличии подобных ракет у арабской группировки, ВМС оказались неготовыми к подобным атакам, а противоракетная система предупреждения на кораблях не сработала.

Что касается ракетных установок типа «земля-земля», то «Хизбалла» использовала против израильских городов реактивные системы залпового огня (РСЗО) различных типов, которые в прессе назывались «катюшами». Марки используемых ракет в основном определялись по осколкам разорвавшихся снарядов и на основании съемок со спутников и авиаразведки Израиля.

По оценкам экспертов, у «Хизбалла» на вооружении находилось около 75 122-мм установок РСЗО «Араш» – иранского аналога советской установки «Град» с 30 или 40 направляющими. Дальность стрельбы установки составляет 20,75 км. Также в наличии имелось 140 – 150 буксируемых 12-ствольных иранских 107-мм РСЗО «Хасеб» дальностью 8,5 км (лицензионные аналоги китайских установок «Тип-63»).

Однако для ЦАХАЛа стало неожиданностью применение против территории Израиля ракет среднего радиуса действия. В частности, «Хизбалла» обстреливала города иранскими ракетами «Фаджр-3» с радиусом действия до 45 км и «Фаджр-5» с радиусом действия до 75 км. Уже к концу конфликта начальник военной разведки АМАН генерал-майор Аарон Зеэви-Фаркаш заявил, что «Хизбалла» обладает ракетами радиусом действия от 115 до 200 км, что означает возможность поражения внутренних районов страны, вплоть до Тель-Авива. Предполагается, что на вооружении у группировки находились также иранские 610 мм ракетные установки «Зильзал-2» с дальностью стрельбы до 200 км и боевой частью в 600 кг.

«Хизбалла» использовала во время войны ложные цели. В связи с этим, несмотря на большое количество отрапортованных пораженных целей, интенсивность ударов по территории Израиля не снижалась. Со стороны разведки было также недооценено количество имеющихся у «Хизбалла» выстрелов к РСЗО. Несмотря на постоянные заверения о том, что запасы группировки на исходе, интенсивность обстрелов лишь возрастала. И вероятнее всего группировка сохранила боеспособность.

За время конфликта по территории Израиля было выпущено более 4 тыс. ракет. Несмотря на интенсивность обстрелов (в определенные дни количество ракет превышало 200), эффективность обстрелов была минимальна, так как арабам приходилось оперативно выводить установки на рубеж и эвакуироваться, опасаясь ударов израильской авиации. В таких условиях добиться точной стрельбы было практически невозможно.

Выводы

В целом, данный конфликт можно охарактеризовать как маневры между США и Ираном перед потенциальной большой войной между сторонами. На этот раз Вашингтон и Тегеран пустили в бой с одной стороны Израиль, с другой – «Хизбалла», пробуя слабые стороны противника и вырабатывая тактику и стратегию будущего конфликта. Таким образом, конфликт в ближайшее время станет поводом для разборов не только в Тель-Авиве и штаб-квартире «Хизбалла», но и в Вашингтоне и Тегеране.

Конфликт стал испытанием для израильской армии, так как популярность ЦАХАЛа в обществе резко упала. Неспособность армии решить вопросы безопасности привела к тому, что, по данным соцопорсов, 74% жителей Израиля выступают за отставку министра обороны Эмира Переца.

Несмотря на использование высокоточного оружия, противобункерных бомб, ковровых бомбардировок и запрещенных кассетных бомб, ЦАХАЛу не удалось вывести из строя военную мощь «Хизбалла». Слабая скоординированность в самом ЦАХАЛе, а также между армией и разведкой привела к значительным потерям. Кроме того, не были освобождены два израильских военнослужащих, чье пленение стало формальным поводом для начала войны. Полностью себя дискредитировала противоракетная система обороны, оказавшаяся неспособной противостоять ударам по территории страны.

Более того, по рассказам израильских солдат, просочившимся в западную прессу, тыловые службы обеспечения, а также командный состав оказались не готовы к ведению полномасштабной войны. Это говорит о том, что в ближайшее время в ЦАХАЛе может начаться серьезная внутренняя реорганизация.

Самвел Мартиросян
Карен Веранян

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱՏԵՔՍԸ

Տեղեկատվական գործողությունների դերը Մերձավոր և Միջին Արևելքում (ՄՄԱ) ընթացող զարգացումներում դժվար է գերագնահատել: Համաձայն Վաշինգտոնի Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի *(CSIS)* Մերձավոր Արևելքի ծրագրի ղեկավար Ջոն Ալտերմանի՝ ս.թ. հուլիս-օգոստոս ամիսներին բռնկված պատերազմի գլխավոր զենքը տեղեկատվությունը, քարոզչությունը և քաղաքական տեխնոլոգիաներն են: Այս ոլորտում, ըստ նրա, Արևմուտքը կորցրել է արտոնյալ դիրքերը: Նման մոտեցումը (որը բաժանում է փորձագիտական հանրության գերակշռող մասը) ենթադրում է, որ գրեթե անհնար է համարժեք պատկերացնել ՄՄԱ-ի վերջին ռազմաքաղաքական զարգացումները՝ առանց տեղեկատվական գործողությունների վերլուծության:

Իսրայելի և ԱՄՆ-ի տեղեկատվական մարտավարությունը.- Ռազմական գործողություններ սկսելն արդեն կրում է որոշակի ներքաղաքական *PR:* Ժողովրդականություն չվայելող Էհուդ Օլմերտը (վերջինիս վարչապետությունն իսրայելական հանրության զգալի մասն ընկալում է Արիել Շարոնի հիվանդությամբ պայմանավորված պատահականություն) գերեվարված զինծառայողներին ազատագրելու պատրվակով սկսելով պատերազմը՝ ուզում էր ցուցադրել իսրայելյան քաղաքացիներին «տեր կանգնելու» իր վճռականությունն ու հաստատակամությունը[1]: «Կապրալ Գիլադ Շալիթի ազատագրման գործողություն» արտահայտությունը հավակնում էր վերածվելու հաղթական պատերազմի կարգախոսի և խորհրդանիշի: Օլմերտի որոշումը մեկնաբանվում էր նաև որպես զուտ հոգեբանական-«մարզչական» գործողություն, որի ընթացքում դեռևս պատերազմ չտեսած իսրայելցիների նոր սերունդը «պետք է սովորեր հաղթել արաբներին»: Սակայն հետագա զարգացումները արժեզրկեցին «կապրալի ազատագրման» և «հաղթել սովորելու» կարգախոսները. դրանք կորցրին իրենց քարոզչական նշանակությունը, և ներկայումս հակամարտող կողմերը բանակցություններ են վարում գերիների փոխանակման շուրջ:

Ինչպես ցույց են տալիս հետպատերազմյան ժամանակահատվածում Իսրայելում ծայր առած ներքաղաքական զարգացումները, մասնավորապես՝ Օլմերտի վարչակազմին, նախագահ Կացավին և *ՅԱԽԱԼ-ի* հրամանատարությանը ներկայացված մեղադրանքները, այդ երկրի իշխանությունները ներքին տեղեկատվական-հոգեբանական ոլորտում կանգնել են լուրջ հիմնախնդիրների առջև: Որոշ փորձագետների կարծիքով՝ ստեղծված իրադրությունը կարելի է բնութագրել որպես համակարգային ճգնաժամ, ինչը նպաստելու է արտագաղթի աճին (ներկայումս Իսրայել է ներգաղթում տարեկան մոտ 25 հազար, երկիրը լքում է մոտ 5 հազար մարդ):

Անկախ վերջնական արդյունքներից՝ անմիջական հակառակորդների նկատմամբ Իսրայելի վարած տեղեկատվական մարտավարությունն ավելի քան ակտիվ էր: Ռազմական գործողությունների առաջին օրը այդ երկրի օդուժը փորձեց ռմբակոծել և ոչնչացնել «*Հիզբալլահի» Ալ-Մանար* հեռուստակայանի գլխավոր ալեհավաքը, սակայն չհասավ նպատակին: «Լրագրողների համաշխարհային ֆեդերացիան» ռմբակոծման առիթով սուր քննադատության ենթարկեց և դատապարտեց Իսրայելի գործողությունները: Վերջինս, ի նշան բողոքի, դուրս եկավ այդ ֆեդերացիայից, սակայն ստիպված էր, հաշվի առնելով համաշխարհային հանրությունում Իսրայելի շուրջ ձևավորվող անբարենպաստ տեղեկատվական իրավիճակը, դադարեցնել *Ալ-Մանարը* ռմբակոծելու փորձերը: Միևնույն ժամանակ, *ՅԱԽԱԼ-ը* չէր դադա-

[1] Հատկանշական է, որ երբ նախկինում գերեվարվում ու սպանվում էին իսրայելական զինծառայողներ, «բազեի» համբավ ունեցող Արիել Շարոնն ավելի խոհեմ էր վարվում և «*Հիզբալլահի»* դեմ լայնածավալ գործողություններ չէր ձեռնարկում:

րեցնում այդ հեռուստակայանի բնականոն աշխատանքը էլեկտրոնային միջոցներով խաթարելու ջանքերը՝ փորձելով խանգարել հատկապես հեռուստանորությունների հաղորդմանը։

Իսրայելական կողմն ակտիվ էր նաև ինտերնետում։ Պատերազմի օրերին Իսրայելի ԱԳՆ-ն հանձնարարել էր դիվանագիտական դասընթացների ուսանողներին ավելի հաճախ մասնակցել ինտերնետային զանազան ֆորումներին, օրագրերում (այսպես կոչված *բլոգերում)* տեղադրել իսրայելանպաստ հաղորդագրություններ։ Ինչպես հայտնի է, նման տեխնոլոգիաներ կիրառում են նաև ամերիկյան և չինական զինված ուժերի «հոգեբանական գործողությունների» ստորաբաժանումները, սակայն իսրայելցիները նկատելիորեն կատարելագործել են դրանք։ «Հրեական ուսանողների միջազգային միության» կողմից մշակվել է հատուկ ծրագիր, որը թույլ է տալիս ինտերնետի միջոցով կապել այդ միության բոլոր անդամներին մի ցանցում։ Այդպիսով, եթե միության անդամներից որևէ մեկը որևէ կայքում տեսնում էր հակաիսրայելական հրապարակումներ, պատերազմի թեմային առնչվող հարցումներ կամ քվեարկություններ, ապա դրա մասին ավտոմատ կերպով տեղեկացվում են «ցանցի» մնացյալ անդամները (մոտ 15 հազար հոգի), որոնք և համապատասխան ձևով արձագանքում են դրանց։ *Ըստ մեզ, նման ծրագրերի փոխառումը և կիրառումը նպատակահարմար է նաև ՀՀ-ԼՂՀ-Ադրբեջան հարաբերությունների շուրջ ընթացող տեղեկատվական գործողություններում։ Նկատենք, որ նման ծրագիր իրագործելու համար կան անհրաժեշտ տեխնիկական և կադրային հնարավորություններ։*

Պատերազմական գործողությունների ընթացքում իսրայելցիները լայնորեն օգտագործում էին արաբներին ուղղված սադրիչ-քարոզչական հեռախոսազանգերը *(Alfa Mtc* և *Touch* իսրայելական հեռախոսացանցերի միջոցով) և *SMS* հաղորդագրությունները։ Դրանք, ըստ արաբական ԶԼՄ-ի, կենտրոնացված բնույթ էին կրում և կազմակերպվում էին *ՅԱԽԱԼ-ի* կողմից։ Հեռախոսազանգերի և *SMS*-ների հիմնական նպատակը հոգեբանական ճնշում և «*Հիզբալլահի»* նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորելն էր. վերջինս ներկայացվում էր որպես արաբների դժբախտության աղբյուր։ Նկատենք, որ արաբական կողմն ինչ-որ պահից սկսեց նմանատիպ հեռախոսային տեխնոլոգիաներ կիրառել Իսրայելի դեմ։

Սակայն պատերազմի ամենածավալուն տեղեկատվական գործողությունը պետք է համարել օգոստոսի 10-ին Մեծ Բրիտանիայում ինքնաթիռների պայթեցումներ ծրագրող ահաբեկչական ցանցի բացահայտումը։ Չբացառելով նման ցանցի առկայությունը և ահաբեկչության հնարավորությունը՝ անհրաժեշտ է ամրագրել, որ տեղեկատվության սփռումը այդ խնդրի շուրջ ընդունել էր տոտալ բնույթ[1] և ընթանում էր որոշակի՝ Իսրայելին և ԱՄՆ-ին ձեռնտու համատեքստում, քանի որ վերջիններիս պայքարը նույնպես որակվում է որպես հակաահաբեկչական։ Ահաբեկիչների վերաբերյալ լրահոսը, ինչպես նաև ավիաչվերթների հետ կապված բազմաթիվ հարցերի քննարկումը տեղեկատվական դաշտից դուրս մղեցին իսրայելա-արաբական հակամարտության վերաբերյալ տեղեկությունները, որոնք այդ պահին արդեն անբարենպաստ էին Իսրայելի համար. Լիբանանում զոհվում էին խաղաղ բնակիչներ և երեխաներ, իսկ ռազմական գործողությունների ժամանակ ոչնչացվում էր իսրայելական զրահատեխնիկան։ Այսինքն՝ բրիտանական ահաբեկիչների սյուժեն նպատակ ուներ շեղելու միջազգային հանրության ուշադրությունը ՄՄԱ-ում տեղի ունեցող իրադարձություններից։

---

[1] Բրիտանական ահաբեկիչների վերաբերյալ տեղեկատվական գործողությունը, ամենայն հավանականությամբ, մշակվել է ԱՄՆ-ում։ Ահաբեկչության թեման դարձել է ամերիկյան տեղեկատվական քաղաքականության կարևորագույն բաղադրիչը (հատկանշական է, որ բրիտանական ահաբեկիչների վերաբերյալ տեղեկատվության տոտալ տարածման արդյունքում նախագահ Բուշի վարկանիշը փոքր-ինչ բարձրացել է)։ Ի լրումն՝ միայն այդ տերությունն է, որն ունի գլոբալ տեղեկատվական դաշտը «լցնելու» ռեսուրսներ։ Բավական է նշել, որ ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի անմիջական ղեկավարությամբ գործում է դեռևս 1953թ. հիմնված *ԱՄՆ Տեղեկատվական գործակալությունը՝ USIA,* որի ղեկավարն է նախագահի *Տեղեկատվական հարցերով գլխավոր խորհրդականը։* Գործակալությունն ունի 10 հազար հաստիք, 200 բաժանմունք աշխարհի 120 երկրներում և թողարկում է տեղեկատվական ծրագրեր 62 լեզվով։ ԱՄՆ նախագահի հրամանով 1999թ. ստեղծվել է մեկ այլ կառույց՝ *Միջազգային հասարակական տեղեկատվության խումբը՝ IPI,* որի խնդիրն է, օգտագործելով հատուկ ծառայություններից ստացված տեղեկությունները, ներգործել օտարերկրյա կառավարությունների, կազմակերպությունների և առանձին անհատների զգացմունքների ու վարքի վրա։ Միևնույն ժամանակ, ամերիկյան տեղեկատվական պատերազմների մեխանիզմը ՄՄԱ-ում ներկայումս այնքան էլ արդյունավետ չի գործում։ Դրա մասին, մասնավորապես, վկայում է այն փաստը, որ Իրաքի ամերիկյան հրամանատարությունը որոշում է ընդունել $20մլն տրամադրել ԱՄՆ և ՄՄԱ-ի ԶԼՄ-ի մոնիթորինգի համար։ Մոնիթորինգի նպատակը տվյալների միասնական շտեմարանի ստեղծումն ու դրա հիման վրա ԱՄՆ իմիջի բարձրացումն է տարածաշրջանում։ Բնորոշ է, որ այդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է *հրահրել* ամսական 4-8 *«դրական»* իրադարձություն և ամերիկացիների համար շահեկան դիրքերից լուսաբանել դրանք։

Բրիտանական օդային ահաբեկիչներին վերաբերող հաղորդումներն առանձնապես շատ էին ամերիկյան ԶԼՄ-ում: Արդյունքում՝ այդ երկրում մի պահ գրեթե դադարեցին լուսաբանվել մերձավորարևելյան զարգացումները: *Նման արտառոց երևույթն առիթ հանդիսացավ ամերիկյան իրականության համար աննախադեպ բողոքի ցույցի Վաշինգտոնում՝ ուղղված ԱՄՆ ԶԼՄ-ում արաբա-իսրայելական հակամարտության վերաբերյալ տեղեկատվության պակասի դեմ:*

Ընդհանուր առմամբ, պատերազմի առաջին փուլում տեղեկատվական ոլորտում նախաձեռնությանը տիրում էր Իսրայելը: Սակայն հետագա զարգացումները փոխեցին իրավիճակը: Որպես մասնավոր պատճառներ՝ լրագրողները նշում են իսրայելական կոշտ ռազմական գրաքննությունը (արգելվում էր հաղորդել Իսրայելի զոհերի թվի, հրթիռակոծման հետևանքների մասին և այլն), որին ստիպված ենթարկվում էին, և դա լրացուցիչ դժգոհություն էր առաջացնում Իսրայելի գործողությունների հանդեպ: Նկատենք, որ այդ երկրի գլխավոր ռազմական գրաքննիչը պատերազմական պայմաններում իրավունք ունի փակել ցանկացած թերթ, հեռուստաալիք կամ ընդհանրապես կարող է հրամայել դադարեցնել ռազմական գործողությունների լուսաբանումը: Լրագրողների հանդեպ միանգամայն այլ մարտավարություն էին կիրառում Լիբանանի իշխանությունները և «*Հիզբալլահը»,* որոնք իրենց կողմից վերահսկվող տարածքներում լրագրողներին տվել էին գրեթե բացարձակ ազատություն:

Իսլամական աշխարհի տեղեկատվական մարտավարության ուրվագիծը.- Հակամարտության ընթացքում ակտիվ էին արաբական հեռուստակայանները, հատկապես՝ *Ալ Ջազիրան,* Իրանի և «*Հիզբալլահի»* լրատվական-քարոզչական միջոցները: Նրանք կարողացան լուծել, մասնավորապես, իրենց առջև դրված հետևյալ խնդիրները.

- Կասեցվեցին շիական «*Հիզբալլահի»* և Պաղեստինի ու Լիբանանի սուննի բնակչության միջև պառակտում մտցնելու հակառակորդի պլանները (ինչն Իսրայելի ռազմավարական նպատակն էր):
- Իսլամական աշխարհին և, մասամբ, միջազգային հանրությանը ներշնչեցին պատերազմում արաբների տարած անվիճելի հաղթանակի պատրանքը և այդպիսով ցրեցին Իսրայելի անպարտելիության ավելի քան կեսդարյա առասպելը:
- Իրենց գործողություններով նպաստեցին պառակտված արաբական աշխարհի գաղափարական համախմբման գործընթացին:

Պետք է շեշտել, որ հակամարտության ընթացքում ԱՄՆ և Իսրայելի տեղեկատվական գործողությունների զգալի մասն ուղղված էր Իրանի դեմ: Բավական է նշել անվանի քաղաքագետ Բեռնարդ Լյուիսի հայտարարությունն ամերիկյան մամուլում, թե հրադադարի օրը՝ օգոստոսի 21-ին, Իրանը միջուկային հարված կհասցնի Իսրայելին: Իրենց հերթին՝ իրանական կայքերն *(Iranatom.ru, Iran.ru)* օպերատիվ էին գործում: Մասնավորապես, *Iran.ru-ի* ամենօրյա լրահոսքի ցանկը *(system@iran.ru)* հայտնվեց վերլուծական կենտրոնների և վերլուծաբանների էլեկտրոնային փոստարկղերում. այդպիսով առաջարկվում էր դյուրին ձևով օգտվել կայքի մատակարարած տեղեկատվությունից: Հատկանշական է նաև, որ պատերազմի օրերին Իրանի նախագահ Ահմադինեժադը բացեց սեփական կայքը (ֆարսի, արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով), որտեղ զետեղված են ոչ միայն նրա կենսագրական տվյալները, այլև հետևողականորեն հրապարակվում են Ահմադինեժադի մոտեցումները զանազան քաղաքական և հասարակական երևույթների վերաբերյալ: Տեղեկատվական պատերազմների տրամաբանությանն է ենթարկվում նաև Ահմադինեժադի՝ հեռուստաբանավեճ վարելու առաջարկությունը Բուշին: Հատկապես կարևոր է, որ տեղեկատվական դաշտում Իրանը կարողացավ փոխել իսլամի կերպարը համաշխարհային հանրության պատկերացումներում. Անկազմակերպ, բղավող ամբոխի փոխարեն ներկայացվեց համառորեն պայքարող և նորագույն տեխնոլոգիաներ յուրացնող հասարակություն:

Պատերազմի տեղեկատվական ընկալումը միջազգային հանրությունում.- Իսրայելի կողմից ռազմական գործողություններ սկսելը միջազգային հանրությունում ընկալվեց Իրաքում

վարվող ամերիկյան քաղաքականության համատեքստում, որի նկատմամբ արդեն իսկ ձևավորվել է կայուն բացասական վերաբերմունք: Ակնհայտ է, որ գլոբալ տեղեկատվական դաշտում հակահիսրայելական և հակաամերիկյան տրամադրությունների ձևավորման գործում կարևորագույն դերակատարում ունեն ԱՄՆ աշխարհաքաղաքական մրցակիցները և այդ տերության քաղաքականության հետ անհամաձայն տարաբնույթ կազմակերպությունները:

Իսրայելի հանդեպ հանրային բացասական կարծիքի ձևավորմանն էապես նպաստեց զոհված խաղաղ բնակիչների և երեխաների վերաբերյալ տեղեկատվության տարածումը: Մասնավորապես՝ միջազգային իրավապաշտպան *Amnesty International* կազմակերպությունը մեղադրեց Իսրայելին պատերազմական հանցագործություններում: Հարկ է նաև նկատել, որ արաբական կողմը լրատվական գործակալություններին երբեմն ներկայացնում էր կեղծված կադրեր և տվյալներ: Հատկանշական է, որ պատերազմից հետո ԱՄՆ-ում ի հայտ եկան նեոկոնսերվատորների և իսրայելական լոբբիի դեմ ուղղված բազմաթիվ հոդվածներ և նյութեր:

Անդրադառնալով ՀՀ տեղեկատավական դաշտում դերակատարում ունեցող ԶԼՄ-ին՝ փաստենք հետևյալը: *CNN և Euronews* կայանների մեկնաբանություններն էապես տարբերվում էին. եթե առաջինը հստակ կողմնորոշված էր «*Հիզբալլահի»* դեմ, ապա երկրորդը ցուցաբերում էր հավասարակշռված մոտեցումներ՝ հիմնական շեշտադրումը կատարելով խնդրի հումանիտար բաղադրիչի վրա: *BBC–ն* ավելի հավասարակշռված դիրքորոշում էր ընդունել՝ հավասարաչափ քննադատելով և՛ «*Հիզբալլահին»,* և՛ Իսրայելին:

Բավական հստակ հակահիսրայելական և արաբամետ դիրքորոշում ցուցաբերեց ռուսաստանյան *РТР* հեռուստաալիքը, մինչդեռ *«Первый канал»* կայանն ավելի հավասարակշռված էր մեկնաբանում պատերազմական գործողությունները: Ընդհանուր առմամբ, ռուսաստանյան ԶԼՄ-ն ավելի բարյացակամ էր արաբների հանդեպ. բավական է նշել, որ *РТР, «Первый канал»* և *НТВ* կայանները «*Հիզբալլահի»* քարոզչական նյութերը հեռարձակել են 253 անգամ, իսկ Իսրայելինը՝ ընդամենը 36:

Մեզ հայտնի չէ, թե ինչ դիրքերից են լուսաբանվել ՄՄԱ իրադարձությունները ՀՀ-ում սփռվող հեռուստահաղորդումներում, քանի որ իրազեկ չենք որևէ հատուկ մոնիթորինգի տվյալների մսին, իսկ ստացված տպավորությունները կարող են սուբյեկտիվ լինել: Միևնույն ժամանակ, եթե նման մոնիթորինգ, իրոք, չի իրականացվել, ապա դա վկայում է ՀՀ տեղեկատվական անվտանգության ոլորտում լուրջ թերացումների մասինէ

Հետևություններ.- ՄՄԱ-ում տեղի ունեցած վերջին պատերազմում տեղեկատվական-հոգեբանական գործոնը կարևորագույն դերակատարում ունեցավ: Ռազմական ոլորտում առավելություն ունենալով և ինչ-որ չափով լուծելով իր առջև դրված մարտավարական խնդիրների մի մասը՝ Իսրայելը և նրա դաշնակից ԱՄՆ-ը տեղեկատվական-հոգեբանական ոլորտում զգալի կորուստներ ունեցան: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱՄՆ, Իսրայել-Իսլամական աշխարհ շարունակական պայքարում վերջինիս դիմադրությունն արտահայտվեց ոչ թե ահաբեկչական-շահիդական տեսքով, այլ տեխնոլոգիական ոլորտում. նրանք ցուցաբերեցին ռազմական հմտություն, իսկ իրենց հաջողությունները և հակառակորդի բացթողումները համապատասխան տեղեկատվական-հոգեբանական տեխնոլոգիաների միջոցով ներկայացրին համաշխարհային հանրությանը:

Գագիկ Տերտերյան
«Նորավանք» հիմնադրամ

ИЗРАИЛЬСКО-КУРДСКИЕ ОТНОШЕНИЯ

Введение

Израильско-курдские отношения, имеющие глубокие исторические корни, по целому ряду причин после создания государства Израиль в 1948 г. приобрели особую значимость на фоне развития политических процессов на всем Ближнем и Среднем Востоке.

В течение столетий на территории нынешнего Северного Ирака жили народы, принадлежащие к различным этническим и языковым группам, исповедующие различные религии и верования. На этой земле вместе проживали мусульмане (курды, туркмены), христиане (армяне, ассирийцы), езиды и евреи. При этом если курды, езиды и отчасти ассирийцы и евреи в большинстве своем проживали в горных областях, занимаясь кочевым скотоводством, то армяне и некоторая часть евреев преимущественно были сосредоточены в крупных городах и поселениях, играя важную роль в торговле, а также в сфере финансов и общественного управления. Многие аспекты курдской и еврейской культуры настолько переплетаются, что некоторые из наиболее популярных еврейских народных легенд возводят этиологию курдов к евреям. Некоторые утверждают, что курды произошли от одного из отколовшихся израильских колен, другие связывают происхождение курдов с царем Соломоном и т.д..

Иракские евреи, особенно живущие в центральных районах страны, еще с периода османского владычества занимали важное положение в экономической, культурной и даже политической жизни Ирака. Первые изменения в отношении евреев начали наблюдаться в конце 1930-х гг., когда в стране стали усиливаться пронацистские настроения, вызванные действиями германских агентов. В 1941 г., в период выступления Рашида Али, в Ираке даже начались еврейские погромы, которые, однако, вскоре были подавлены английской армией. С началом так называемой «Войны Израиля за независимость» 1948-1949 гг. евреи начали подвергаться преследованиям со стороны арабского правительства, еврейская община Ирака очутилась в тяжелейшей экономической ситуации, что вызвало активный отток еврейского населения из страны. В результате, значительная часть курдских и иракских евреев покинула Ирак и переселилась в новосозданное Государство Израиль в 1948-1952 гг. Тем не менее, в Израиле они продолжали жить обособленной общиной: отмечали курдские праздники, сохраняли курдскую культуру и язык, стали выпускать собственные газеты. То, что практически вся еврейская община Ирака (по различным оценкам, около 120.000 – 130.000 человек) – одна из старейших, если не самая старейшая община в еврейской диаспоре – покинула насиженные места, было обусловлено комбинацией таких факторов, как идеи сионизма, получившие новое звучание после создания Израиля, и чувство незащищенности и опасности, которое испытывала община после первых арабо-израильских войн.

Однако по прибытии в Израиль курдские и иракские евреи столкнулись с многочисленными проблемами. Кроме естественных трудностей, связанных с акклиматизацией десятков тысяч оторванных от привычных условий жизни, потерявших работу и имущество людей, добавлялся вопрос взаимоотношений с различными группами местного еврейского населения. Исторически сложилось так, что большую часть рассеянного по всему миру еврейского народа составляли так называемые «европейские евреи», или ашкенази. Даже после Холокоста, в результате которого была уничтожена большая часть европейской еврейской диаспоры, ашкенази (и их потомки во многих частях света) по численности превосходили все остальные ветви евреев. Именно они с образованием Государства Израиль составили большинство его населения. Они также сосредоточили в своих руках все нити государственного управления, культурной и общественной жизни страны. Между ашкенази и остальными евреями, особенно так называемыми «восточными евреями», всегда существовали сложности и соперничество, связанное

с различиями как в мировоззрении, языке, обычаях, так и с самоидентификацией и социальной самооценкой. Иракские и курдские евреи не могли смириться с тем, что в новом государстве, где практически всем заправляли ашкенази, они оказались в дискриминированном положении. Они подвергались притеснениям за свои патриархальные, по мнению остальных евреев, обычаи и образ жизни, диалект, а также – что было весьма важным фактором - за более толерантное отношение к мусульманам, доходящее до допущения смешанных браков с ними.

Вместе с тем, курдские евреи всегда играли важную роль в политике Израиля по отношению к курдам, являясь в этой стране как бы основным источником знаний и информации о курдском этническом ландшафте в регионе. Пожалуй, нигде в мире курдский этнополитический фактор не находит такого понимания и не является объектом такого пристального внимания, разработки и политического планирования, как в Израиле. Этому, кроме прочего, во многом способствует наличие в стране значительной общины курдских евреев.

В отношениях между курдами и евреями новая страница началась с середины 1960-х гг., когда на севере Ирака, в населенных курдами районах началась серия вооруженных выступлений курдов против иракского правительства, которая в итоге привела не только к открытой партизанской борьбе против багдадского правительства, но и перекинулась на сопредельные страны: Турцию, Иран и Сирию.

Выступления и первоначальные успехи иракских курдов в борьбе с багдадским правительством привлекли активное внимание израильских спецслужб, которые увидели в них эффективных союзников в борьбе с арабскими режимами Сирии и особенно Ирака – наиболее последовательных противников Израиля в регионе. Поэтому к концу 1950-х гг. в действиях еврейского государства в отношении курдских меньшинств арабских государств Ближнего Востока начали проявляться элементы политики, впоследствии получившей известность под названием «периферийной стратегии».

«Периферийная стратегия» и роль курдов в политике Израиля на Ближнем и Среднем Востоке

Традиционно еврейское государство в своей политике по обеспечению безопасности учитывало такой важнейший элемент, как реализацию т.н. «периферийной стратегии», предусматривающую сотрудничество с неарабскими государствами региона. Однако, надо отметить, что основные принципы «периферийной стратегии» были разработаны идеологами сионизма еще до самого возникновения Государства Израиль, а политические контакты еврейских организаций с курдами начались в 30-х гг. XX в.

После создания Государства Израиль Давид Бен-Гурион попытался расширить эту стратегию. Он сконцентрировал внимание на формировании противоборствующего альянса вокруг арабских стран, развивая стратегическое партнерство с Турцией, Ираном и Эфиопией. Хотя в задачи этой политики входило также ослабление Сирии, Судана, Ливана и Египта, однако главной целью этих планов являлся Ирак. Именно с целью ослабить или предотвратить угрозу, исходящую от Ирака, Израиль установил секретные, но довольно тесные связи с лидерами курдского движения. Уже к концу 1950-х – началу 1960-х гг. Израиль стал основным источником поставок вооружений и организации тренировок курдов в их борьбе против правительства Ирака. Хотя все детали этих операций до сих пор не раскрыты, но, по различным оценкам, тысячи агентов Моссад и инструкторов израильской армии в этот период находились в курдонаселенных районах Северного Ирака, под различными прикрытиями осуществляя свои секретные задания.

Разведывательная спецслужба Курдской Демократической Партии – «Парастин» – также была создана с помощью Моссад в конце 1960-х гг. Операции израильской разведки на севере Ирака имели особое значение для Израиля еще и потому, что в боях против иракских курдов участвовали не только правительственные войска Ирака (точнее - баасистского режима), но и регулярные войска другого арабского государства – Сирии, где у власти так же находилась партия «Баас». Таким образом, в результате поддержки израильтянами иракских курдов значи-

тельные контингенты сирийских войск были отвлечены от границ Израиля. А занятость иракских войск подавлением выступлений курдов на севере страны помешала участию Ирака в «Войне Судного дня» 1973 г. против Израиля, т.к. это требовало вывода подразделений иракской армии как с внутреннего (курдского) фронта, так и сосредоточенных на границах с Ираном.

Еще с конца 1950-х гг. спецслужбы Израиля, в особенности Моссад, самым активным образом сотрудничали с ЦРУ и в формировании шахской разведывательной службы SAVAK. Тесное сотрудничество израильской, американской и иранской разведывательных служб ярко проявилось в поддержке курдских повстанцев на севере Ирака. Это сотрудничество продолжалось вплоть до 1975 г., когда шахское правительство, стремясь улучшить отношения с Ираком, заключило т.н. Алжирские соглашения и прекратило поддержку иракских курдов. Нельзя исключить и того, что израильская разведка именно благодаря своим курдским источникам и агентам бывшей шахской спецслужбы *SAVAK* получила необходимые сведения (хотя в данном случае более ценными были данные авиационной разведки) о местонахождении и расположении иракского ядерного реактора Таммуз-1 (Осирак), уничтоженного в результате налета израильских ВВС в июне 1981 г.

После Исламской революции в Иране Моссад и ЦРУ начали работать теперь уже в обратном направлении – действуя из курдонаселенных областей Ирака (особенно Моссад) и Турции против Ирана. О начавшейся активной подрывной работе ЦРУ и Моссад в населенных курдами районах Ирана свидетельствуют опубликованные материалы бывшего американского посольства в Тегеране по курдскому вопросу.

Израильско-курдские отношения на современном этапе

Особые отношения Израиля и курдов вновь проявились во время операции США и международной коалиции против Ирака в 1991г. после оккупации последним Кувейта. Как известно, после начала активной фазы операции «Буря в пустыне» среди шиитов на юге страны и на курдском Севере вспыхнули инспирированные союзниками восстания против багдадского режима. Эти восстания были жестоко подавлены правительственными войсками. Еврейские организации по всему миру развернули активную кампанию по организации помощи курдам Ирака, а также мощные пропагандистские и лоббистские мероприятия в правительствах своих стран, особенно в США, по оказанию давления на Ирак. Сам Израиль продемонстрировал свои симпатии к курдам путем организации широкомасштабных поставок через турецко-иракскую границу медикаментов, продуктов первой необходимости, одежды и палаток. Данная кампания во многом была организована общиной иракских евреев Израиля. Иракские евреи даже организовали масштабную демонстрацию у резиденции израильского премьера Шамира в Иерусалиме, в ходе его встречи с госсекретарем США Джеймсом Бейкером, призвав американское правительство защитить курдов от репрессий со стороны Саддама Хусейна.

Однако отношение Израиля к курдам во многом уже зависело от уровня израильско-турецкого сотрудничества. Как отметил в мае 1997 г. премьер-министр Израиля Б.Нетаньяху: «Турция страдает от террористических атак РКК, и мы не видим разницы между терроризмом РКК и тем, с чем сталкивается сам Израиль». Эта речь Натаньяху была примечательна не только тем, он высказался против создания курдского государства, но и его заявлением о том, что между Сирией и Израилем не может быть заключен мир, пока Дамаск не прекратит свою поддержку РКК.

Изменившиеся приоритеты политики безопасности Израиля вынудили его пересмотреть отношение к турецким курдам. Это ярко проявилось в ходе операции израильской авиации против «Курдской рабочей партии» в Ливане на севере долины Бекаа в ходе операции «Гроздья Гнева», а также в содействии израильской разведке в установлении местонахождения и захвата лидера турецких курдов А.Оджалана.

Однако после завершения новой военной операции США против Ирака в 2003г. (от которой, наверное, более всего выиграли курды), в турецкой прессе появились сведения, что один из курдских лидеров по происхождению еврей и, как результат, «Израиль вскоре начнет ус-

танавливать тесные связи с де-факто существующим курдским государством на севере Ирака». В течение нескольких недель подобный сценарий активно муссировался турецкими СМИ. В известной турецкой газете *Hurriyet* была опубликована статья, где указывалось, что лидер *KDP* Массуд Барзани – этнический еврей и происходит из старинного рода курдских раввинов. В турецкой прессе считали, что М.Барзани якобы должен возглавить новое произраильское курдско-еврейское государство на территории библейской «Земли Обетованной», простирающейся от Нила до Ефрата, включая в том числе населенные курдами территории Северного Ирака. Однако эксперты отмечают, что вся история с вероятным еврейским происхождением М.Барзани составляет лишь частью обширной концепции, распространившейся в последнее время в турецких консервативно-националистических и исламских кругах и пользующейся большой популярностью среди общественности Турции. Добавим также, что всего несколько лет назад в Турции была издана и пользовалась большой популярностью книга доктора Гаруна Яйая «Курдская карта Израиля» *(«Israel's Kurdish Card»*), в которой говорилось о планах Израиля расширить свои границы за счет Ирака и Турции в союзе с курдами.

Как бы то ни было, абсолютно ясно, что создание курдской автономии на севере Ирака после войны 2003г. и свержения режима С.Хуссейна привело к началу нового этапа в отношениях Израиля и курдов, что может стать серьезным ограничителем его политических контактов с другими государствами региона. Тем не менее, «курды рассчитывают, и не без основания, на поддержку не только государственных структур Израиля, но и тех ста тысяч курдских евреев этой страны, которые ранее проживали на территории Курдистана. И такое сотрудничество, причем именно всестороннее, похоже, в дальнейшем будет только развиваться, несмотря на противодействие со стороны Ирана и ряда арабских государств».

Заключение

Курдский фактор всегда играл особую роль в геостратегии Израиля после создания еврейского государства. Взаимоотношения курдов и Израиля явились важным элементом политики еврейского государства на Ближнем и Среднем Востоке, эффективным рычагом давления на Ирак (в меньшей степени и на Сирию) для отвлечения внимания багдадского правительства и недопущения его активного вмешательства в израильско-арабский конфликт. При этом надо отметить, что тесным контактам Израиля и курдов способствовала историческая и культурно-бытовая близость евреев и курдов, обусловленная наличием сильной и весьма многочисленной еврейской общины в Ираке, по праву считающейся древнейшей среди всех общин в мире. Несмотря на исход практически всей общины из Ирака в Государство Израиль, иракские евреи сохранили свою самобытность, во многом определяя политику Израиля в отношение курдов, а также Ирака, Сирии, Турции и Ирана. В этом свою, пусть и ограниченную, роль сыграла также курдская община Израиля.

Одновременно уровень политических взаимоотношений Израиля с курдами значительно корректируется с учетом позиции арабских государств, Ирана и Турции. В настоящее время, с созданием курдской автономии в Ираке, сотрудничество Израиля с курдами может вновь стать одним из важных факторов в геополитических процессах во всем регионе.

Сергей Минасян

«ՀԻԶԲԱԼԼԱՀ»

Տեղեկանք

Արաբերեն՝ «Ալլահի կուսակցություն», լիբանանյան շիական կրոնաքաղաքական շարժում[1]: Ստեղծվել է 1982թ. Բեքաայի հովտում (Բաալբեկում), Իրանի գործուն միջամտությամբ, Լիբանանում իսրայելական ագրեսիային դիմագրավելու նպատակով[2]: Շարժման հոգևոր առաջնորդը շեյխ Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահն է (վերջինս իմամ Խոմեյնիից ստացել է այաթոլլայի կոչում), իսկ գլխավոր քարտուղարը՝ շեյխ Սեյիդ Հասան Նասրալլահը (1992-ից):

Շարժման ձևավորումն անմիջականորեն կապված էր թե՛ ներլիբանանյան սոցիալ-քաղաքական խնդիրների և թե՛ Միջին Արևելքում տիրող իրավիճակի, մասնավորապես՝ արաբա-իսրայելական հակամարտության հետ:

Շարժումը, փաստորեն, կազմավորվել է 1982թ. հունիսին, Լիբանանում իսրայելական օկուպացիայից անմիջապես հետո: Նրա կորիզը կազմեցին իրաքյան Նաջաֆում 1960-ականներին ստեղծված «Ադ-դավա» («Կոչ») կազմակերպության անդամները, ինչպես նաև այն ժամանակ Լիբանանում ամենաազդեցիկ շիական կառույցի՝ «Ամալի» (որը նրա առաջնորդ Մուսա Սադրի խորհրդավոր անհետացումից հետո ղեկավարում էր Նաբիհ Բերին) ծայրահեղ թևի ներկայացուցիչները՝ Հուսեյն Մուսավիի գլխավորությամբ: Ավելի որպես շարժում, քան կուսակցություն՝ «Հիզբալլահն» ի հայտ եկավ խարիզմատիկ գործիչ, շիա հոգևորական շեյխ Ֆադլալլահի ղեկավարությամբ:

«Հիզբալլահը» դեմ էր Լիբանանի կառավարման հիմքում ընկած էթնոդավանական սկզբունքին, ինչն առավել մեծ լիազորություններ էր տալիս Լիբանանի քրիստոնյա մարոնի և սուննի համայնքներին: Բացի այդ, «Հիզբալլահին» չէր գոհացնում «Ամալի» չափավոր (կամ կոմֆորմիստական) կեցվածքը:

1984-ից ի վեր, երբ «Ամալ» շարժումն իր գործունեությունը հիմնականում տեղափոխեց քաղաքական դաշտ, հարավային Լիբանանում իսրայելական օկուպացիայի դեմ զինված պայքարը ստանձնեց «Հիզբալլահը»: Նրա ակտիվ ռազմական գործողությունների շնորհիվ միայն 1985-ին Իսրայելը ստիպված եղավ իր զորքերը դուրս բերել հարավային Լիբանանի տարածքի մեծ մասից՝ ռազմական ներկայությունը պահպանելով միայն իսրայելա-լիբանանյան սահմանի երկայնքով 10 կմ-անոց «անվտանգության գոտում»:

«Հիզբալլահն» իր գոյության մասին պաշտոնապես հայտարարեց 1985թ. փետրվարի 16-ին, երբ հրապարկվեց շարժման «Բաց նամակը՝ ուղղված Լիբանանի և ողջ աշխարհի կեղեքվածներին», որտեղ շարադրված էին շարժման ծրագրերն ու նպատակները: «Հիզբալլահը» պատրաստակամություն էր հայտնում պայքարելու Լիբանանում օտարերկրյա զավթիչների ցանկացած գործողության դեմ: Իսրայելը համարվում էր հիմնական թշնամի, որն իր կողմն էր գրավել ԱՄՆ-ը և Արևմուտքը: Բացի այդ, կոչ էր արվում Լիբանանում ընտրել իսլամական սկզբունքների վրա խարսխված կառավարություն, ինչը հնարավորություն կտար երկրում արդարություն հաստատել:

1980-ականների վերջին «Հիզբալլահը» իսլամն առաջարկում էր որպես այլընտրանք կապիտալիզմին և սոցիալիզմին: Շարժումը ձգտում էր իր հիմնական քաղաքական ու գաղա-

---

[1] Լիբանանի շուրջ 18 էթնոդավանական համայնքների շարքում շիա համայնքն ամենախոշորն է, սակայն եղել է ամենաշրջանցվածը՝ հատկապես սոցիալական առումով: Շիաների մեծ մասն ապրում է հարավային Լիբանանում, ինչպես նաև Բեքաայի հովտում և լեռնային Լիբանանում:

[2] 1978թ. մարտի 15-ին Իսրայելը «Լիտանի» գործողության շրջանակներում ներխուժեց հարավային Լիբանան և գրավեց մինչև Լիտանի գետն ընկած շրջանը, այսինքն՝ երկրի ողջ տարածքի 10%-ը: 1982թ. Իսրայելը երկրորդ անգամ ներխուժեց Լիբանան և ընդհուպ գրավեց Բեյրութը «Խաղաղություն Գալիլեային» ռազմական գործողության ծրագրի շրջանակներում: Լիբանանի դեմ Իսրայելի իրականացրած հարձակումներն ուղղված էին Լիբանանում հաստատված Պաղեստինի ազատագրության կազմակերպության զինված խմբավորումների գործողությունների դեմ, որոնք օգտագործում էին Լիբանանի հարավը Իսրայելի դեմ պայքարում:

փարախոսական ուղղություններն ընդօրինակել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական ուղեգծից: Պատահական չէ, որ շարժման առաջնորդներն իրենց համարում են այաթոլլա Խոմեյնիի հետևորդները, միևնույն ժամանակ նշում, որ «Հիզբալլահը» գործում է ոչ թե Իրանի, այլ իսլամի հետաքրքրությունների շրջանակում և չի պատրաստվում իսլամը Լիբանանում ուժով ներդնել: Ցանկացած մահմեդական (թե՛ շիա, թե՛ սուննի) կարող է անդամագրվել շարժմանը: «Հիզբալլահի» ներքին կառուցվածքը ենթադրում է ուլամայի (կրոնական դասի) իշխող դիրքը, ինչն արտացոլում է խոմեյնիականության բնորոշ գծերը:

Ինչ վերաբերում է շարժման ահաբեկչական բնույթին, ապա կայացման փուլում «Հիզբալլահի» քայլերն այս առումով խոսուն էին. Բեյրութում միջազգային խաղաղապահ ուժերի զորանոցների պայթյուններ, ինքնաթիռների առևանգում և պատանդներ, ինչը պայմանավորված էր Լիբանանի նկատմամբ Իսրայելի քաղաքականությամբ և նպատակ ուներ բևեռելու միջազգային հանրության ուշադրությունը լիբանանյան խնդրի վրա:

«Հիզբալլահին» հովանավորող պետություններն են Իրանը և Սիրիան: Իրանը, շարժմանը ֆինանսական և ռազմական օժանդակություն ցույց տալով, ձգտել և ձգտում է իր գաղափարական ազդեցությունը տարածել ոչ միան շիա, այլև սուննի մահմեդականների շրջանում, ամրապնդել դիրքերը տարածաշրջանում, ինչպես նաև լծակներ ունենալ Իսրայելի նկատմամբ:

Իր հերթին՝ Սիրիան «Հիզբալլահ» շարժումը համարել և համարում է կարևոր միջոց Իսրայելի հետ բանակցություններում, որոնք վերաբերում են 1967թ. արաբա-իսրայելական պատերազմի ընթացքում Իսրայելի գրաված Գոլանի բարձունքների վերադարձմանը: Անհերքելի է այն փաստը, որ Դամասկոսը հանգուցային դեր է խաղացել Իրան-«Հիզբալլահ» կոմունիկացիաների ապահովման հարցում: Սիրիան Իսրայելի դեմ պայքարի շրջանակներում Լիբանանի տարածքը շատ հաճախ օգտագործել է տարատեսակ ռազմականացված խմբավորումների համար հենակետեր ստեղծելու նպատակով: «Հիզբալլահի» հետ Սիրիայի ռազմավարական համագործակցության շնորհիվ, ի դեմս շիա համայնքի, Սիրիան լուրջ հենարան ունի Լիբանանում:

Ըստ 1989թ. Տաիֆի համաձայնագրի, երբ Լիբանանում վերջ դրվեց երկարատև քաղաքացիական պատերազմին, «Հիզբալլահը» միակ խմբավորումն էր, որն, ի տարբերություն լիբանանյան հակամարտության մեջ ներգրավված մյուս ուժերի, օգտվելով Սիրիայի աջակցությունից, պահպանեց իր ռազմական թևը և, միևնույն ժամանակ, մուտք գործեց Լիբանանի քաղաքական դաշտ՝ Լիբանանի հարավը համարելով իր ազդեցության գոտի: 1992թ. «Հիզբալլահը» խորհրդարանական ընտրություններում ստացավ 8 տեղ 128-ից: Նույն թվականին շարժման ռազմական թևը ֆորմալ կերպով առանձնացվեց կազմակերպությունից: Քաղաքական դաշտ մտնելուց հետո «Հիզբալլահն» այլևս մտադիր չէ Լիբանանում ներդնել Իրանի Իսլամական Հանրապետության մոդելը:

«Հիզբալլահի» հետ պարբերական բախումների, ինչպես նաև մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացով և մի շարք այլ գործոններով պայմանավորված՝ իսրայելական կառավարությունը 2000թ. զորքերը դուրս բերեց Լիբանանի ողջ տարածքից:

Իսրայելական զորքերի դուրսբերումից հետո ևս «Հիզբալլահը» շարունակում է Լիբանանի հարավից Իսրայելի դեմ պարբերական հարձակումները՝ դրանք հիմնավորելով Շեբայի ագարակները (որը վիճահարույց խնդիր է) իսրայելական օկուպացիայից ազատագրելու փաստարկով:

Արևմուտքում «Հիզբալլահը» հայտնի է միայն որպես ահաբեկչական կազմակերպություն: Դեռևս 1999 հոկտեմբերին ԱՄՆ Պետդեպարտամենտը «Հիզբալլահը» մտցրեց 28 առավել վտանգավոր ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում: Իսկ 2004թ. ՄԱԿ ԱԽ 15.59 բանաձևի համաձայն՝ Լիբանանում պետք է զինաթափվեին բոլոր զինված խմբավորումները (իմա՝ «Հիզբալլահը»), ինչպես նաև դուրս բերվեին 1976-ից ի վեր Լիբանանում առկա սիրիական ռազմական ուժերը[1]: Հատկանշական է, որ «Հիզբալլահը» Ռուսաստանի կողմից երբեք չի համարվել ահաբեկչական կազմակերպություն:

[1] 2005թ. փետրվարի 14-ին Ռաֆիկ Հարիրիի սպանությանը հաջորդած միջազգային ճնշումների արդյունքում սիրիական զորամիավորումները, որ երկիր էին մտցվել դեռևս 1976-ին, 2005թ. մայիսին վերջնականորեն լքեցին Լիբանանի տարածքը:

Ամեն տարի իսրայելական հատուկ ծառայությունները բազմաթիվ տվյալներ են բերում Իսրայելի նկատմամբ «Հիզբալլահի» իրականացրած ահաբեկչական գործողությունների մասին: Իսրայելի վարչակազմը ձգտում է իսրայելական հասարակությանը համախմբել արտաքին սպառնալիքի՝ պաղեստինյան «Համասի» և լիբանանյան «Հիզբալլահի» դեմ: «Ահաբեկչությունն» այն կռվանն է, որ միավորում է Արևմուտքի և Իսրայելի շահերը:

«Հիզբալլահի» ռազմական թևը շատ ավելի մարտունակ է և լավ զինված, քան լիբանանյան բանակը: «Հիզբալլահի» ենթակառուցվածքների ոչնչացմանն էր ուղղված 2006թ. հուլիս-օգոստոսին Լիբանանի դեմ Իսրայելի իրականացրած պատերազմը:

«Հիզբալլահը» վայելում է երկրի շուրջ 2 մլն շիաների աջակցությունը: Այն նաև սոցիալական ուղղվածություն ունեցող շարժում է, որը մեծ դեր է խաղացել շիական շրջաններում կրթական և առողջապահական հաստատություններ, բնակելի շենքեր, մզկիթներ կառուցելու հարցում:

Շարժումն ունի սեփական հեռուստատեսություն («Ալ-մանար»), որ համարվում է ամենահեղինակավորներից մեկը Լիբանանում, ռադիոկայան («Ան-Նուր»), ինտերնետային կայքեր, ամսագիր («Ալ-ահդ»), լրատվական տեղեկատու («Ալ-մաուկիֆ»), ինչպես նաև տեղեկատվական ու հրատարակչական այլ կառույցներ:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

«ՀԱՄԱՍ»

Տեղեկանք

Արաբերեն՝ խանդավառություն, ոգեշնչում, աքրոնիմը՝ Հարաքա ալ-մուկավամա ալ-իսլամիյյա (բառացի՝ Իսլամական դիմադրության շարժում) - պաղեստինյան սուննիական կրոնաքաղաքական կազմակերպություն Հորդանան գետի արևմտյան ափին և Ղազայում:

Հիմնվել է 1987թ. դեկտեմբերին, Ղազայում, պաղեստինյան «Մահմեդական եղբայրների» առաջնորդ շեյխ Ահմադ Յասինի և կազմակերպության վեց այլ անդամների կողմից 1987-ի ինթիֆադայից (արաբերեն՝ պոռթկում, ընդվզում) անմիջապես հետո: Առանձին տվյալների համաձայն՝ «Համասի» ստեղծման հարցում գործուն մասնակցություն են ունեցել իսրայելական հատուկ ծառայությունները՝ Յասիր Արաֆաթի «Ֆաթհին» հակակշիռ ստեղծելու համար: Ուշագրավ է, որ դեռևս 1978թ. իսրայելական իշխանությունները շեյխ Ահմադ Յասինին թույլատրել էին ղեկավարել իսլամական բարեգործական-կրոնական մի կազմակերպություն՝ «Ալ-մուջամաան» («Միահամուռություն»), որի հիմքի վրա հետագայում ձևավորվեց «Համասը»:

«Համասի» ստեղծումը համընկավ պատմական այդ շրջանում իսլամիզմի զարթոնքի հետ: Պատահական չէ, որ այն կարողացավ ժողովրդականություն վայելել նաև որպես իսլամական սոցիալական շարժում:

«Համասի» գաղափարախոսության հիմքում ընկած է Իսլամական խարտիան (կամ «Համասի» կանոնադրությունը), որն ընդունվել է 1987-ին, համաձայն որի՝ շարժման մոտալուտ նպատակն իսրայելական օկուպացիայի վերացումն է Արևմտյան ափին, Ղազայում և Արևելյան Երուսաղեմում, հանրաքվեի հիման վրա իսլամական պետության հիմնումը: Հեռավոր ապագայի խնդիրը մանդատային Պաղեստինի (այսինքն՝ պատմական Պաղեստինի, որը, բնականաբար, ներառում է Իսրայելը) տարածքի վրա իսլամական պետության հիմնումն է:

Ի տարբերություն «Ֆաթհի», որն աշխարհիկ կազմակերպություն է, «Համասի» ակունքներում, ինչպես նշեցինք, իսլամական արմատներ են: Շարժումն ակտիվորեն պայքարել է Պաղեստինում իսլամական սկզբունքների ներդրման օգտին: Միևնույն ժամանակ, «Համասի» գաղափարախոսական արժեհամակարգում, բացի իսլամիզմից, կան պանարաբիզմի և պաղեստինյան ազգայնականության բաղադրիչներ:

«Համասը» զգալի ֆինանսական միջոցներ է ներդրել բարեգործական նպատակներով, կրթական և առողջապահական հաստատությունների ու մզկիթների շինարարությունում, օգնել համայնքի անապահով շրջանակներին:

Ինթիֆադայի շրջանում հիմնել է իր ռազմական թևը՝ Իզ ադ-Դին Կասսամի անունով, որը 1936-1939թթ. պաղեստինյան ազգային պայքարի առաջնորդն էր:

Շնորհիվ ապակենտրոն կառուցվածքի, շարժմանը հաջողվեց գոյատևել 1989թ. շեյխ Յասինի ձերբակալությունից հետո: Այդ շրջանում շարժման ղեկավարությունը ստանձնեց Աբդ ալ-Ազիզ Ռանտիսին:

Այն բանից հետո, երբ «Ֆաթհը» 1990-1991թթ. Պարսից ծոցի ճգնաժամի ժամանակ հանդես եկավ Իրաքի աթակցությամբ, «Համաս» շարժումը, ի հեճուկս Յ.Արաֆաթի, Ծոցի երկրներից և Սաուդյան Արաբիայից մեծ քանակությամբ դրամաշնորհներ ստացավ:

«Համասը» դեմ էր, որ «Ֆաթհը» 1991թ. հոկտեմբերին մասնակցի Մադրիդի մերձավոր-արևելյան խաղաղության գործընթացին: «Համասը» չընդունեց 1993թ. Օսլոյի համաձայնագիրը: Արդեն 1994թ. մայիսին, երբ Ղազայի շրջանում հիմնվեց Պաղեստինյան ինքնավարությունը /ՊԻ/, որի տարածքում ապրում էին հրեա վերաբնակներ, «Համասը» վերստին արտահայտեց իր մերժողական դիրքորոշումը, համաձայն որի՝ հրեա վերաբնակները և իսրայելական զորքերը պետք է դիտարկվեն որպես օկուպացիոն ուժեր Ղազայի շրջանում, որոնց հարկ է դիմադրություն ցույց տալ:

1994թ. հոկտեմբերին, այն բանից հետո, երբ Իզ ադ-Դին Կասսամի բրիգադի անդամները Թել Ավիվում առևանգեցին իսրայելցի մի զինվորի, Պաղեստինյան ինքնավարության ոստիկանությունը, իսրայելական ճնշումների արդյունքում, ձերբակալեց «Համասի» շուրջ 350 աջակիցների: «Համասը» դարձավ ՊԻ-ի ընդդիմադիր ուժը:

Շարժումը չմասնակցեց 1996թ. հունվարին Պաղեստինյան ինքնավարության նախագահի և օրենսդիր մարմնի ընտրություններին, քանի որ դրանք բխում էին Օսլոյի համաձայնագրից:

Այն բանից հետո, երբ Իսրայելի վարչապետ Բ.Նաթանյահուն 1997-ի սկզբին վերջնականապես թույլատրեց Երուսաղեմի հարավային արվարձանում Ջաբալ Աբու Ղընեյմի հրեական վերաբնակեցումը, Իզ ադ-Դին Կասամի բրիգադը հրեական շրջանակներում կազմակերպեց անձնասպան ահաբեկչություններ: Իսրայելի ճնշումների արդյունքում՝ ՊԻ-ն բռնություններ իրականացրեց «Համասի» նկատմամբ:

1997թ. հոկտեմբերին իսրայելական իշխանություններն անակնկալ բանտից ազատ արձակեցին շեյխ Ահմադ Յասինին՝ ապահովելու համար իրենց երկու գործակալների ազատ արձակումն այն բանից հետո, երբ վերջիններս փորձել էին վերացնել «Համասի» առաջնորդներից մեկին՝ Խալիդ Մաշաալին:

1998-ին ՊԻ-ն ձերբակալեց «Համասի» մի շարք առաջնորդների՝ Իսրայելի հետ Ուայ Ռիվերի կնքած համաձայնագիրը քննադատելու համար: 1999թ. հոկտեմբերին «Համասը» միացավ Յ.Արաֆաթի դեմ «ազգային երկխոսության» մեջ միավորված պաղեստինյան մյուս ընդդիմադիր ուժերին: Հետագա տարիներին «Համասը», որպես կանոն, քննադատել է ՊԻ կողմից ԱՄՆ-ի հովանու ներքո Իսրայելի հետ իրականացրած ցանկացած երկխոսություն և շարունակել է Իսրայելի դեմ, որպես պայքարի միջոց, օգտագործել ահաբեկչական գործողությունները: Այն լայնորեն ներդրել է շահիդների (կամ անձնասպան գործողությունների) ինստիտուտը՝ խորքում մնալով ազգային շարժում:

Արիել Շարոնի վարչապետության օրոք, 2004թ. մարտի 22-ին, Ղազայում, առավոտյան աղոթքից տուն վերադառնալու ճանապարհին իսրայելական օդուժի կողմից սպանվում է անդամալույծ շեյխ Յասինը: «Համասի» ղեկավարությունն իր ձեռքը վերցրած Ռանտիսին սպանվում է շատ չանցած՝ 2004թ. ապրիլի 17-ին, իսրայելական ուժերի կողմից:

Որպես ահաբեկչական կազմակերպություն՝ «Համասն» ԱՄՆ «սև» ցուցակում է, որը գործել է Միջին Արևելքում ԱՄՆ հետաքրքրությունների դեմ, և որ ամենավտանգավորն է, ֆինանսավորվել է Իրանի կողմից և համագործակցել լիբանանյան «Հիզբալլահի» հետ:

Չնայած «Համասը» սուննիական ուղղվածություն ունի, սակայն արդյունավետորեն համագործակել է շիական «Հիզբալլահի» հետ, ինչը փաստում է, որ Իսրայելին չի հաջողվել շահարկել շիա-սուննի երկփեղկվածությունը:

«Համասի» հաջողությունը շատ դեպքերում կապված էր այն իրողության հետ, որ Արևմտյան ափին և Ղազայում ապրող պաղեստինցիները հուսախաբ էին եղել Պաղեստինյան հարցի կարգավորման առաջատարը համարվող «Ֆաթհի» գործունեությունից, որն աստիճանաբար կոռումպացվում էր: «Համասը» մշտապես վիճարկել է Յասիր Արաֆաթի իրավունքը՝ լինելու պաղեստինցի ժողովրդի շահերի միակ արտահայտիչը: «Համասի» առաջնորդների պատկերացմամբ՝ պաղեստինյան խնդրի կարգավորման միակ տարբերակը ռազմական ճանապարհն է, որին պետք է մասնակցեն ոչ միայն պաղեստինցիները, այլև ողջ արաբական աշխարհը: «Համասը» դեմ էր Իսրայելի հետ ցանկացած շփման, մանավանդ որ այն տեղի էր ունենում ԱՄՆ հովանավորությամբ: Ահա այս տրամաբանության պատճառով էր «Համասի» պայքարը մի ծայրով ուղղված էր Իսրայելի հետ բանակցող «Ֆաթհի» դեմ, ինչը գնահատվում էր որպես դավաճանություն:

Կողմերի միջև բանակցությունների և առանձին դեպքերում դրանց ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների ձախողումն ինչ-որ չափով նպաստում էր «Համասի» իշխանության գալու հնարավորությանը:

2006թ. հունվարի 25-ին Պաղեստինյան ինքնավարությունում՝ Հորդանան գետի Արևմտյան ափին և Ղազայի շրջանում, վերջին 12 տարիների ընթացքում անցկացված երկրորդ խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Համաս» շարժումն աննախադեպ հաղթանակ տարավ:

Թեև «Համասի» հաղթանակը Պաղեստինում օրենսդիր մարմնի ազատ և արդար ընտրությունների արդյունք էր, սակայն այն լուրջ մտահոգություն առաջացրեց Իսրայելում, ԱՄՆ-ում և մի շարք արևմտյան երկրներում: Նրանց կողմից ահաբեկչական կազմակերպություն դիտարկվող «Համասի» իշխանության գալը նշանակում էր, թե կարող է հարցականի տակ դրվել պաղեստինա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը:

Ընտրության արդյունքների հրապարակումից անմիջապես հետո իսրայելական իշխանությունները հայտարարեցին, թե չեն պատրաստվում բանակցել ահաբեկիչների հետ, եթե նրանք չհրաժարվեն ահաբեկչությունից, ճանաչեն Իսրայել պետության գոյության իրավունքը, ընդունեն նախկինում կողմերի միջև կնքված պայմանագրերը: Ներկայումս իսրայելական բանտերում են գտնվում ՊԻ օրենսդիր մարմնի և կառավարության՝ «Համասը» ներկայացնող մի շարք անդամներ:

«Համասը» դեռևս անդրդվելի է Իսրայելը ճանաչելու հարցում: Նշենք, որ իր գործունեության սկզբում նման կեցվածք ուներ նաև «Ֆաթհը»: Սակայն 1989թ. այն իր կանոնադրության մեջ փոփոխություններ մտցրեց. ճանաչեց Իսրայել պետությունը և պատրաստ էր բանակցել նրա հետ:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ